

891.99

NOV 29 1921

297

Մ 72 նոր.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ.

(Հայոց արարածից ու Տանկաց
Սուրբանի կենսից.)



Աշխատանքից

ԱՐԱՔՍ Մ. ՄԻՆԱՍԵԱՆՑԸ.



ՆՈՐ-ՆԱԽԻՉԵԻԱՆ
Տպարան Սերոբիկ Աւագանի
Ե Ր Ե

ԿՐԸ

01.07.2013

43993

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆՍԻՆՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գրքի անվանումը և հեղինակը

(Գրքի մասին տեղեկություններ)

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն .


)))

Հրատարակելով ներկայ գիրքը, պատիւ ունիմ նախա-
դասել ընթերցողաց, որ երկրիս տխրագոյն զրութիւնը,
ստիպեց ինձ երկար ժամանակ կորցնելով, աշխատասիրել
վերոյիշեալը, որով յոյս ունիմ որ ընթերցողների համար
թէկուզ և քիչ, բայց պէտք է որ արգիւնալի լինի:

Հարկադիր եմ համարում նաև տողադրել, որ ներկայ-
յումս, երկրիս մէջ լայն տարածութիւն են ըմբռնել յեղա-
փոխական կուսակցութիւնները, որոնց ծրագիրները մշա-
կուած են մի քանի նախընթաց մարդկանցով, որոնք ջեր-
մեռանդութեամբ աշխատում են իւրենց ծրագիրն մտցնել
կողմնակի անձանց կողորդների մէջ. այդ կուսակցութիւն-
ների թիւը հասնում է մօտ 15-ի, այստեղից պարզէ, որ
կուսակցութիւններից իւրաքանչիւրը, իւր ծրագիրը միւս-
ներից ընտրելի է համարում, և հաւատացած է, որ եթէ իւր
ծրագիրը համաթիւ շունչառութիւն ստանայ, երկիրս
կը կառավարուի խաղաղ ու ապահով: Բայց երկիրս, ինչպէս
յայտնի է, կարող է կառավարուել միայն մի կուսակցութեան
ծրագրով, և շատ կարելի է, որ ենթադրեայ վարչութեան
ծրագիրը, չի համապատասխանի ոչ մի կուսակցութեան ծրա-
գրի, քանի որ մեզ յայտնի չէ ենթադրեալ վարչութեան ծրա-
գիրը որով յոյս ունինք որ պէտք կառավարուինք հանգիստ
ու անվրդով և որն պէտքէ մշակուի համերկրային խորհր-
դով, մենք համարեա թէ իրաւունք չունինք յոյս ընձայելու
որեէ կուսակցութեան:

Այսպիսով յայտնում եմ, որ ինչպէս ես, այնպէս էլ իմ
գրքոյկս, պատկանում է ոչ մի կուսակցութեան:

Արարս Մինասեան.



ՊԱՅՆՐԱՋՍԻ ԱՌԻԹՈՎ.

I.

Ո՛հ ինչի՛ փոխուեց աշխարհս պատուական,
Միլիարդ անձի տէր ու տիրուհական,
Թողնելով իւրեն փառքն չորրեկան,
Անխուսափելի դեռ այժմ, սակայն:
Ին՞չի նա փոխեց իւր փառքն ու պատիւ,
Իրեն ներշնչող ճոխ մարդկանց շնորհիւ,
Որոնց մեղքերն չունին որոշ թիւ
Որպէս թեոնարքայ օդապար արծիւ:
Ինչ՞ի՛ նեա փոխեց արդիւնքն հաճոյք,
Մինչի յաւիտեան ընկեր իւրեն զոյգ.
Որն բերկրանքով տալիս էր հրապոյրք,
Որպէս ուրախդէմք քնքուշ ձի նժոյգ:
Ին՞չն ստիպեց նորան փառահեղ,
Տասնեակ դարերից ծերացած, անմեղ,
Նայել վիճակին իւրեն խիստ ազեղ.
Շիշտելով կեանքին ծանրակշիռ, նեղ:
Ի՞նչ կարիք ունէր նա հրդեհաշէջ,
Հագիւամարելի կրակն անշէջ
Ընդարձակ ու լայն գցել սրտի մէջ.
Որից անխնայ՝ գոյանում է վէճ:
Աշխարհիս ամեն ծայրից անազին,

Չայներ են լուում, ձայներ ողբազին.
 Որոնք փչում են, չարագզայց հողին
 Ու բացում դուռն թոյլ տառապանքին:

Սանդարամետքից լուում է բողոճ,
 Խորտակման, կլանման, խորասուզման կոչ,
 Որից սթափուած, սարսափ է գգում ողջ
 Հորիզոնական երկրագունդն ամբողջ:

Կարծես ներկայէ ժամն գուշակուած,
 Սողոմ-գոմորի աղէտի դիմաց.

Կրակ կարկուտի աճն փոխարկուած,
 Տիրել է այժմ գնդակի հարուած:

Այդ կը հաղորդէ մեզ հեռագիրն,
 Լրտես, սուրհանդակ, մերձ լրագիրն,
 Որի խաբուսիկ նոր ծրագիրն,
 Կը հասկանայ միայն հրացանակիրն,

Աշխարհիս ամեն անկիւնի խորքում,
 Դիրք է ըմբռնել, լու խռովութիւն,
 Խնդիրք, աղաղակ, գոչում, անարկում,
 Հնչիւն, տարափում, բողոք, որոտում:

Մի՞թէ նապահուած վերքերն բարդուած,
 Կուզէ բժշկել միջոցով այդ կարճ.

Մի՞թէ այդ կեանքն որնէ այժմ յուզուած,
 Կուզէ նորոգել, փոխել անկասկած:

Համակամք, ազգու, պատերազմ բառը,
 Յնցել է մարդկանց ամենքին խառը.

Որին կախստայ խիտ սարքն ու քարը,
 Ու շքեղ, յուշիկ, անմեղիկ գառը:

Ո՛հ, ինչ է շինում այն անշէջ վայրում,
 Սարսափակիր լայն, կուռի մեծ դաշտում,

Այն կրակ - օդով շնչող դժողքում.
 Որին աշխարհս կուզէ այժմ հաշտում:

Այնտեղ դիզուած են դիակք բազմաթիւ,
 Գնդակ, ումբի, տարափման շնորհիւ.

Որոնց զոհն տեսած չէ, ոչ մի կռիւ,
 Հարիւր հազարք են, և իրաւ անթիւ:

Այնտեղ հոսում է արիւնն հեղեղ,
 Վտակ առ վտակ մարդկանց այլացեղ,
 Հոսում է, գոչում «Վրէժ» պարզ, կանթեղ,
 Իւր հեղինակին նայելով անմեղ:

Փչում են նորանք իւրենց հողին սուրբ,
 Մինչի այդ օրը, պահած թարմ ու նուրբ,
 Վարակուած պայթիչ բծերից ումբ.
 Հիւսելով շատ մեծ ու վիթխարի թումբ:

Իսկն է այնտեղ սանդարամետքն անդրնդոց,
 Անդանայի, հրաշէջ. դժողք լեարդ խոց,
 Այնտեղ է և խայթող կիժն որպէս օձ,
 Անող մարդկանց ուժասպառ ութիւնակոծ:

Վարակճահար, նոների յետքն ագահ,
 Ազգում է սուռ, զարհուրելի, սարսափ, ահ,
 Դահիճի պէս վիճակից իւր գոհ, վստահ,
 Թէ աջ, թէ ձախ, տարածում է անդարձ մահ:

Այնտեղ մերձ մահ, ընկած տխմար, վիրաւոր,
 Եւ վարակուած գէնքի բժից թունաւոր,
 Խիստ տանջանքով, հառաչանքով, կամակոր,
 Օգնութեան է սպասում զինուորն մոլոր:

Բարձրացրած կարմիր խաչով մի գրօշ,
 Բժիշկներն, խիստ եռանդով, անորոշ,
 Կապկապում են, թաց վերքերն անախորժ,
 Չը հաշուելով իւրենց կեանքն մի գրօշ:

Գնդակների տակ կարկուտի պէս հեղեղ,
 Քոյրք բարեսիրտ աշխատում են միատեղ.
 Չորս կողմանէն հասցնում են բոյժագեղ

Քրրոնաթաթախ, արագաշարժ, քոյրք չքեղ:
 Կեանքից իւր դուլ, զինւորն հոգի մի առած,
 Անկեղծ մահուայ արնոտ շապիկն հագած,
 Պատւի որջով ոգևորուած, գոգուած,
 Դիմում է նա ձկան նման միշտ յառաջ:
 Նրան չի ազդում գնդակներէի ահ, դողը,
 Չի ազդում և մահուան խաւար, նուրբ, քողը,
 Չի մոռանում, դէպ թշնամին, քամաելի իւր սիւր,
 Այլ ընթանում է նա յառաջ, երբ որ հնչում է փողը:
 Նա չէ լինում, որպէս յրաես թշնամու մէջ դաւաճան,
 Անակնկալ, անփշրելի, ծանրակապանք, սուրբ երգման.
 Այլ լինում է հաւատարիմ, մեծ պատուէրի խտտութեան,
 Յառաջադէմ, վրէժխնդիր, քաջ զինւորն պատուական:
 Կռուի դաշտում թշնամու դէմ կռուող իւրեն հա-
 կառակ,
 Ամուրահիմք պինդ գիրք բռնած բառի կէտում յաղ-
 թանակ,
 Հաւատ, աղօթք, յոյսն դրած, սուրբ հրացանի վերան
 տաք,
 Գոռում է «կեցցէ» պաշտօնարարն և թէ զինւորն հա-
 սարակ:

II.

Շնորհիւ իւրեն կեղծ բնութեան,
 Մէջն է աշխարհս վատ դրութեան,
 Որպէս փուշն իւր վարդին,
 Նախանձում է միշտ զարդին:
 Ինչպէս հարան նորպսակ,
 Գրպանում ոսկով քռակ,
 Ամեն բանից նա շատ գոհ,
 Մի միայն մէկից է դժգոհ:

Ինչպէս չուղիղ սատանան,
 Չար մտքերով, դաւաճան,
 Բարեբանին հակառակ
 Յեցէ նորան շարունակ:
 Թողնելով կեանքն խաղաղ,
 Ստիպուեցաւ նա անվախ,
 Ծարաւախում կորիւնով,
 Լալ երկիրն արխնով:
 Կեանքից իւրենց անվայել,
 Երիտասարդք են կանչուել.
 Ուժերով որ նորածիլ,
 Հայրենիքին պաշտպանիլ:
 Կանչուած են նոր պսակք,
 Ամուրիք ու նորհասակք.
 Որոնք կեանք չեն տակաւին,
 Վարել մէջն աշխարհին:
 Հայրենիքի բայց սէրն,
 Եւ ինքնակալ մեծ Տէրն,
 Ուրախութեամբ են տանում,
 Դէպի կռիւ արխնխում:
 Եւ Սուրէն էլ մեր մի քաջ,
 Առած հրացան ու մի խաչ,
 Մարթինն իւր ողջ պատած
 Փամփուշտներով ձախ ու աջ,
 Կախած սուր մի պողպատեայ
 Ու դաշոյն մի արծաթեայ,
 Կամքովն իւր սեփական,
 Պատրաստուում է մարտութեան:
 Պատրաստուում է դէպ կռիւ,
 Չար թշնամուն տալ ցրիւ,
 Որպէս հեղ մի մըրիկ,

Յրուի յարգն գոլորիկ:
 Նրա աչերից քաղցրատես,
 Հրեշտակի պէս քնքուշ, հեզ,
 Սիրոյ կայծն բխում էր
 Աչերիցն այդ կարծես:
 Դէմքն նորա գոլորին,
 Որն նախանձ էր բոլորին.
 Փայլփայլում էր բոլորակ,
 Որպէս փայլուն մի լուսնեակ:
 Վարակում էր և ցաւի,
 Նորա քայլքն կաքաւի.
 Իւրեն զխող անհամբեր
 Մարդկանցը նա երկսեռ:
 Նրա հերերն ոսկեայ թել,
 Իւրեն դէմքին լիստ վայել.
 Իւզի նման անուշ հոտ,
 Ծածանում էն որպէս խոտ:
 Աղուամազն նորաբուս,
 Նրա ծնօտին որպէս բոյս,
 Դալար, փափուկ, գեղանի,
 Զունի ոչ մի պատանի:
 Հրեշտակի պէս պատանին,
 Նախանձ կրող սատանին,
 Մղում է զէպ պատերազմ,
 Զոհել կեանքն փառակազմ:
 Նա ուրախ էր այդ զէպքին.
 Դրած յոյսն իւր զէնքին,
 Բայց ունէր միաք մի ընդհատ,
 Որ սէրն մնաց իւր թերատ:
 Գիշեր-ցերեկ հառաչում,
 Եւ սրտագին մեղանշում,

Սէրն գցած սրտի մէջ,
 Որպէս կրակ մի անշէջ,
 Թափառում էր օրերով,
 Խելքշարժ անող շորերով,
 Որ բաղդ ունենայ տեսնել,
 Աշխէնին բազմավայել:
 Որն կարծես «սէր» բառին,
 Զէր ծանօթ և մի տառին,
 Որը Սուրէնին էր յոյս,
 Որպէս թռչունն մարդից — խոյս:
 Կարծես գանուած բռնութեան,
 Տակն ծնողաց բնութեան,
 Ինչպէս մարդուն նուենին,
 Սէրն չէր յայտնում Սուրէնին:

III.

Արշալոյսն մեր թափանցիկ ու բարին,
 Կտրեց երկրիս անգամ յեաքն խաւարին.
 Տարածելով հեղհեղէտէ իւր ուղին,
 Փռեց թևերն, տիրեց երկրիս ճիւղերին:
 Ամենայն տեղ նորան բարի զգացին.
 Աղօթքներով նորան զիմազրեցին,
 Ամենայն մարդ առած նոր ուժ, նոր եռանդ.
 Նետեց զէպ իւր աշխատանքին ջերմեռանդ:
 Արևն էլ իւր ճառագայթքով բոլորակ,
 Աշխարհումս զցած հայացքն իւր տար,
 Արշալոյսից տարածելով յեա նշոյլ,
 Կարծես միայն մարդկանց էր համար նա ծոյլ:
 Արքայական եղանակին այդ սրտու,
 Ոմանց սրտից բխում էր թանձր մոմու,
 Երջանկութեան ոմանցից լուում էր ձայն,

Ոմանցից էլ նիւթներին այդ համաձայն:

Պատշկամբի վերայ բարձր բազմայարկ
Որոնք չունին որոշագէտ մի համարք
Կանգնածէր մի շքեղ աննման արարած
Որի փայլն ցայտում էր մինչ «Արագած»:

Անգին քարի նման ունէր նա մի շող.
Որոյ փայլքից շողշողում է քարն ու հող,
Ճառագայթի նման ծակիչ արևին,
Վարակում էր ծառին ու իւր տերեխին:

Այդ Աշխէնն էր, կանգնած տխուր, ու արտում.
Գարնան հողմի յետածգեալ ջերմ ցրտում,
Կանգնած էր նա լի մտքերով իւր խառն,
Մտածելով խիստ վիճակն իւր դառն:

Սեղանի վերայ արմունգն իւր դրած,
Փափուկ ձեռքով քնքուշ ծնօտն բռնած,
Թուխ յոնքերով աչիկներն հուրավառ,
Նետել էր նա դէպի գետին հողմատար:

Թշիկների նրա վրայից վարդագոյն,
Մարգարտի պէս արտասուքն պսպրղուն,
Աչիկներից վերոյիշեալ, մարգասպան,
Գոլորում են դէպի ոտքերն նորան:

Թաշկինակով, երբեմն նա մետաքսեայ,
Արտասուքի կաթիլներն աղլուայ,
Սև աչերից, լացի ուժից կարմրացած,
Սրբում էր նա. հեկհեկալով, սիրտ առած:

Երբեմն էլ, նորա դէմքն խիստ տխրած,
Նաև գոյնն փոխարկուած, ու ճնշուած,
Մտանում էր մի աննման ուրիշ փայլ.
Կարծես սրտում նա զգում էր մի զմայլ:

Մետաքսափայլ, սև ծամերն նորա խիտ,
Երկու օրում խճուճ, որպէս չսանրած ծիտ,

Չատուած սանրի առամներից նրանք հատ-հատ,
Ծածկած էին սպիտակ, փափուկ նրա ճակատ:

Ամեն մի մարդ, ով նրան տեսնէր այդ զիւրքին,
Կաշխատէր որ բաղդ ունենայ նա ներքին,
Ծանօթանալ վիճակի հետ այդ տգեղ,
Գեղեցկութեան Աստուածունու հանճարեղ:

Եւ անշուշտ նա կաշխատէր տալ նորան բոյժ,
Թէ ունենար կարողութիւն, և թէ ուժ.
Եւ անշուշտ նա չէր խնայիլ նորան հեղ,
Թէ փրկումն անէր նորա կեանքն կէս:

Երբեմն էլ նա իւր աչերն տխրազին,
Նետում էր իւր զիմաց տանող լայն ճամբին.
Կարծես ճանապարհից ձյղ լայն, մարդքով լիք,
Սպասում էր նա որ ևէ աւետիք:

Չանցաւ կէս ժամ. երբ նորա կամքն կատարուեց.
Ու տխուր դերի վարագոյրը պատառուեց,
Կարծես նորա մոմունն անցաւ բարդուած,
Երբ Սուրէնն ամբոխի մէջ երևաց:

Ո՛վ կարող էր նկարզրել. կամ պատմել,
Եւ ո՞ւմ գրչի թռչուն ուժն կը պատէր,
Յանկարծ նորանց տեսնուելն համվայել,
Միմիանց հետ. նկարել և թէ գրել:

Դեռ չի ծնուած ոչ մի մէկը այնպիսի,
Որ ունենայ կարողութիւն մեկուսի,
Քննազրել, ընդիմացքն ցաւելի
Սիրոյ հուրով բորբոքուած այդ անձերի:

Երբ նրան տեսաւ մեր Աշխէնն նախ իսկոյն,
Պատշկամբի վրայ իջաւ բարձրաւոյն.
Նետեց իւրեն դէպի յարկն նա ներքին,
Դիմադրել Աստուծոյ այդ նոր բերիքին:

Ոտքից գլուխ բեհեզի մէջ պճնուած,

Այդ բոպէին ամբոխի մէջ նա շողաց.
Չեղաւ մօտաջափ երեք բոպէ դրանից անց,
Երբ երկուքը նայում էին մի միանց:

Ինչպէս արևն երկնքումն, պինդ անշարժ,
Ծակում է մարդկանց լոյսով աչերն անվարժ.
Այնպէս լոյսն նրանց աչերում խիստ ազդուն,
Ծակում էին միմիանց աչերն արթուն:

Զինաւորուած մեր Սուրէնն գեղեցիկ,
Բաբախելով քաջ սրտիկն անկեղծիկ,
Արագ քայլքով անհամբեր ու սրտաբաց,
Մօտենալով այս խօսքերն նա ասաց:

«Աշխարհումս թողած ամենայն մի բան,
Թողած տուն, տեղ, ու հայրենիք սեփական,
Քոյր ու եղբայր ու ազգական թողած ես,
Անպատմելի սէր ընծաեայ դէպի քեզ:

Գեղեցկութիւնդ ինձ տակաւին գբաւեց.
Պարզ սրտիկս տոճորեց ու կրակեց,
Ուժս բնական նա ինձանից նախ խլեց,
Եւ կարծես թէ ոչ ինչի ինձ փոխարկեց:

Նա ինձ արեց համարեա թէ խելագար.
Եւ ստիպեց չարչարուել միշտ, անդադար,
Նա ինձ գրկեց աշխարհիս կեանքից քաղցրիկ,
Ու վայր ձգեց աստիճանից ինձ բարձրիկ:

Ո՛վ դու անգութ Աշխէնիկ իմ սիրելի,
Աշխարհիս մէջ ամենայն տեղ պատուելի,
Մի՞թէ ազգում չի քեզ սէրն անառակ,
Եւ կամ մի՞թէ կը լինիս դու ինձ հակառակ:

Սիրեցի քեզ ես իմ ամբողջ մարմնով
Ամբողջ կեանքով, ողջ հոգով և ողջ սրտով,
Բայց զղջում եմ ես այժմ իմ արարքին,
Որ սիրեցի ես քեզի պէս անգութին:

Զղջում եմ իմ անբաւելի մեղքերս.
Բարուժական, աններելի, իմ սէրս,
Ափսոսում եմ անթիւ եմ չարչարանքիս,
Ու մինչև մահ խաւար, չնչին իմ կեանքիս:
Ստիպուած եմ անշուշտ ես անխնամքատար:

Եղած քեզնից անբուժելի սիրահար,
Մղել դէպի պատերազմի լայն դաշտը,
Ու այդպիսով շոկել քեզնից իմ հաշտը»:
Այս խօսքերից յետոյ տիրեց լուռթիւն.

Ու Աշխէնն զգաց իւր մէջ թոյլութիւն,
Եւ կարծես թէ բոլոր ուժերն հաւաքեց,
Ու հեռուեալ խօսքերն արտասանեց:

«Այդ խօսքերդ դառնակշիռ անսահման,
Կուղեկցեն ինձ շուտով դէպի գերեզման.
Շուտով կը խլեն ինձնից իմ սիրաս իմ հոգին,
Ու կընուիրեն խաւար ու մութ աշխարհին:

Այդ խօսքերով դու իմ նիրհս կտարեցիր,
Եւ իմ կեանքի ծրագիրն դու ցրուեցիր,
Տասնուեօթ տարուայ իմ լեարդս, դու, սրտակիր,
Աչքիս առջև կտրատեցիր, այրեցիր:

Ասան տեսնեմ, Սուրէն դու իմ թանգագին,
Աշխարհիս մէջ սիրեցածս իմ սրտագին,
Ճիշտ են քո այդ խօսքերդ կրակի պէս տաք,
Թէ անում ես սիրուհուդ հեռ դու կատակ»:

Մետաքսապատ թաշկինակն սպիտակ,
Բռնած Սուրէնն իւր քնքուշիկ քիթի տակ,
Եւ երբ Աշխէնն տուեց նորան սէրն իմաց,
Կրկնապատիկ այրուած սրտով նա ասաց:

«Լսիր Աշխէն, ծաղիկ դու իմ անթառամ,
Պղտորեցիր արիւնս տաք, անխնամ,
Զգալով իմ անկեղծ սէրս, քեզնից մութ,

Քար սրտովդ շարժեցիր ինձ վերայ գութ:
 Բայց անաղ... գարթցնեցիր դու ուշ, և ուշ,
 Եւ ուշ բացիր քո սրտիկդ, ինձ, քնքուշ.
 Լուծուեցիր դու բանալ վիճակդ քո դառ,
 Երբ ստիպուեցայ, գնալ գոհուել անպատճառ:
 Պէտքէ գնամ ու անխնայ իմ կեանքս
 Նուիրեմ ես հայրենիքիս, իմ պարտքս.
 Պէտքէ ցոյց տամ որ հայն էլ դեռ չի քնած,
 Ու չունի ուժ ոչ մի մէկից նա պակաս:
 Պէտք է ցոյց տամ ես, պիղծ, կուսպաշտ, ճապուհցուն,
 Որոնք մեզ մէջ գգում են խիստ թուլութիւն,
 Թէ ինչ է գուտ նշանակում հայ բառը,
 Կը ճանաչի որին ողջ սար ու քարը:
 Լցուած հոգով այն հայերի ես մի այն,
 Որոնք առին քաջութեամբ մեր Երևան.
 Որոնք առին անդրկասպի մեծ մասը,
 Լայնատարած ու թանգագին Կովկասը:
 Պէտքէ նորան տամ ես ճանաչ մեր հային.
 Եւ նրան ցոյց տամ, թէ մերձ է նա իւր մահին,
 Յոյց տամ նորան, թէ ում հետ նա ունի գործ,
 Որի առջև չի անցանի ոչ մի փորձ:
 Լցուած կայսրի եռանդով, հոգով, ես լի,
 Համահայացք, բարեհաճ, մեր սիրելի,
 Ծրագրին ուղիղ ես նրա աժմ համաձայն,
 Կուղիտրուեմ դէպի ճանապարհ արեան:
 Եթէ Սասունած խղճայ դժբաղդներիս մեզ,
 Եւ կամ խղճայ ինձ դժբաղդիս և կամ քեզ,
 Թէ դարձամ ես կուռից առողջ, լալազին
 Ծնորդիւ Սասունոյ կրհասանինք մեր փափագին:
 Բայց այժմ թող հնչի բաժանման բոսկէն.
 Եւ իւր ձեռքով լուսաթաթախ Քերովբէն,

2834

Իւր զօրաւոր դաւազանով սրբազան,
 Մեր սրտերն անի միմիանցից բաժան:
 Թող նա ջոկի մեզի անմեղ, ու արդար,
 Որպէս մայրն մանկիկից իւր անկատար.
 Թող նա լինի պայման մեր սուրբ բաժանման,
 Ու նա լինի հաւատարիմ մեր վկան»:
 «Ինչ եմ լսում ես քեզանից սվ անգութ.
 Մաղում ես իմ գլխիս վերայ դու կարկուտ,
 Միթէ արդէն լուծել ես դու միտք հաստատ,
 Զրկել ինձի երեսիցդ արեհատ:
 Միթէ չունիս դու խիղճ անգամ մասնաւոր,
 Որ թողնում ես տառապանքի մէջ մոլոր.
 Զրկում ես ինձ կեանքից, փառքից ու պատւից,
 Ու ստիպում ես փախուստ տալ այս աշխարհից:
 Ստիպում ես լինել մտքերի մէջ խառ.
 Ու լինում ես իմ վատ օրին դու պատճառ,
 Ստիպում են վիզս ծռած, տարեցտար,
 Սպասել քո գալստեանդ անպատճառ:
 Եթէ վճուել ես դու գնալ անպատճառ,
 Պատերազմի դէպի դաշտը խոռովարար,
 Եւ չի ազդի եթէ քեզ ոչ մի խնդիր,
 Գնա մեր ազգին, հայրենիքին, պաշտպաներ:
 Գնա կուռիք դու հրէշի պէս անմահին,
 Փառքանիք դու անունն մեր հային.
 Եւ սուր իմաց պիղծ, թշնամուն մոլորուած,
 Որ նա շուտով կընի դէպ խորք գոլորուած:
 Բայց իմացիր, որ իմ սէրս անսահման,
 Յցուած նետի պէս մէջն քո տաք արեան,
 Կը պարզեւ քեզ ուժ, արդիւնք ու տաղանդ,
 Մըրիկի պէս ցրուել նորան համեռանդ:
 Չեմ կարող ես լինել քեզի շուտանդ»



Այլ կը լինիմ հաւատարիմ մեր խոստման,
Ժամից առ ժամ, օրից ըստ օր, տարեց տար,
Մինչ յաւիտեան պիտ սպասեմ հուրահար:

Քեզնից, գատուած իմ կեանքս այսուհետեւ,
Չունի կասկած որ չարժի մի գրօշ թեթիւ.

Այդ չէ կատակ, չէ գրամով գնած բան,

Այլ այդ սէր է, որն կըտանի զերեզման:

Ո՛հ. ին՞չ կըլինի իմ վերջս անբաղդ, անյայտ.

Եւ կամ ին՞չնէ սպասում աշխարհում ինձ այդ,

Ո՞վ կարող է փրկել կեանքից այդ ազդու:

Միմիայն դու, միմիայն դու, միմիայն դու»:

Ասաց. բացեց իւր թեւերն բարայլիկ,

Ու փաթաթեց Սուրէնիկին իւր քաղցրիկ.

Սեղմեց ուժգին նրան վարակուած իւր սրաին,

Որ նորանով առնէ փափագն վերջին:

Արտասուած թոր նրանք աչերով զարգացուած,

Գրկերն ընկան ազահութեամբ միմիանց

Լսուում էր նրանց համբոյրների չիւնն թանգ,

Եւ լսուում էր բաժանման ծանր հառաչանք:

Չին պատրաստ էր, նորանժոյգ խոխնջիւն.

Տալով նորան համբոյրն վերջին գողգոջիւն,

Մնաս բարեան. գոչեց ձայնով իւր խեղդուկ.

Ու սլացաւ մեր Սուրէնն քաջ, կտրուկ:

Բաժանուեցին, նրանք անխնայ միմիանցից.

Որպէս հարսն սիրածի իւր զաղաղից,

Բաժանուեցին. որպէս հարուստն որդէգուրկ,

Ձրկուում է որդուց իւր միածին ու բաղցրուկ:

Նայելով իւր անյայտացող սիրելուն,

Մնաց ապշած Աշխէնն մեր վարդազոյն.

Քայլեց առաջ ուզեց մէկէլ նայել բաց,

Բայց ոչ, և ոչ, չերևաց նա, չերևաց:

IV.

Անցաւ տարին. հասաւ դարունն հովային,

Ու հեան բերեց մեղմիկ քամուն ծովային.

Տարածեց նա աշխարհիս մէջ մաքուր օդ,

Եւ տարածեց բուրմունքն իւր անուշ հոտ:

Մարգագետինք, այգիք, անտառք, տաշտ ու ձոր,

Ջարդարուեցան զգեստներով կանաչ, նոր.

Մայրերի մօտ գառնիկները նորածին,

Հովուի սրինգի քաղցրիկ պարով պարեցին:

Ամենայն ապրող կենդանի շունչ սուունչ,

Արթնացաւ իւր ձմրան քնից լուռ ու մունջ.

Ծծելով կուշա մաքուր օդն գովարար,

Փառաբանեց ստեղծողին իւր բարերար:

Գարնանային մի գիշերում մեղմ, հանդարտ,

Վերոյիշեալ շինութիւնում բազմայարկ,

Շքէզազարդ ննջարանի ճօխ միջում,

Քաղցրիկ քնով օրիորդ Աշխէնն էր ննջում:

Նրա աչերին երևում են տեսիլք վառ.

Ու տեսնում էր երազներ նա շատ խիստ խառ,

Բայց մի երազ որն տեսաւ նա փառահեղ,

Թողեց վերան սարսափելի տիպ ահեղ:

Տեսաւ իրեն պատերազմի նա դաշտում.

Ու տեսաւ այնտեղ իւր սիրած սիրելուն,

Տեսաւ ինչպէս իւր Սուրէնն սրտաքաջ,

Գոլորում էր պիղծ թշնամուն ձախ ու աջ:

Ինչպէս սուրը ձեռքին բռնած փայլաշող,

Չար թշնամուն կրում էր սարսափ, ահ, դուլ.

Ինչպէս նորա հարուածներն կտրատիչ,

Յրուում են մահ, թշնամու մէջ զիշատիչ:

Տեսաւ ինչպէս որտեղից մի լիրբ գնդակ,

Կայծակի պէս յանկարծ Սուրէնին գաւաւ.
 Սուր նետի պէս նորա սրտի մէջ խոցուեց,
 Ու սարի պէս քաջ հսկային գոլորեց:

Տեսաւ ինչպէս արիւնի մէջ թփրտաց,
 Անակնյատ իւր սիրունուն նա գովաց:
 Լեղապատառ քանի քայլ յետ արշաւեց,
 Միննոյն ժամուն ճիշ արձակեց ու զարթեց:

Սարսափելի ահ, դողի մէջ նա պատած,
 Փշաքաղուեց նրա մարմինն թուլացած,
 Ննջարանից իրեն որպէս խելագար,
 Իսկոյն և ետ դուրս թռաւ նա դողահար:

Հանդիպեց նա մայրիկի հետ հարազատ,
 Ու երազն պատմեց տեսած խստիւ վատ,
 Պատմեց ինչպէս տեսաւ նա իւր Սուրէնին,
 Գնդակահար ընկած մէջն տաք կուռին:

Աշխէնի այդ դողոթջիւնը անսահման,
 Երբոր տեսաւ զարհուրած տիկին Մարթան,
 Իւր աղջկան զրուակու միտք առած,
 Մեղմիկ ձայնով այս խօսքերն նա ասաց:

«Արի դատրիկ, մի տանջիր քեզ չարաչար.
 Ու մի եղիր վիճակով մէկի թշուառ,
 Կտրիր յոյսդ քո այդ սիրած Սուրէնից,
 Ու մի սպասիր նորան արեան հեղեղից:

Գուցէ մեռած է նա այժմ իւր մահով.
 Եւ կամ հարուած է մահաբեր գնդակով,
 Կամ թէ գուցէ եղած է նա կերակուր,
 Սրին սոսկալի թշնամու մեր կտրահուր:

Գուցէ գաշտում անկած է նա վիրաւոր.
 Եւ կամ բռնուած է նա զերի անսովոր,
 Գասպիտարում գուցէ ընկած է հիւանդ,
 Եւ կամ նորան ուղեկցում են դէպի բանդ:

Գուցէ եղած չի հաւատարիմ քեզի,
 Ու փողած է չիթը հեան բեհեզի,
 Եւ կամ գուցէ ընկած է նա անուսում,
 Պոռնիկների, շոայլների, վատ դասում.

Լսիր Աշխէն. դարձիր քո այդ մտքերից,
 Դարձիր քո այդ անյոյս կապած պայմանից,
 Սպասելու չունի նորան ոչ մի կէտ.
 Որ դու նորան յոյս ես կապել բնագէտ:

Ընտրած եմ ես քեզի մի հատ ամուսին.
 Որի դէմքը փայլում է որպէս լուսին,
 Նա հարուստ է, երիտասարդ ու համեստ,
 Որը միայն քեզի կըլնի անհրաժեշտ:

Նա Սուրէնից ոչ մի բանով չէ պակաս.
 Որի համար ծանր այդպէս կը ողբաս,
 Այլ առաւել ունի նա զեղեցկութիւն,
 Եւ համեստ վարք ու հարուստ կարողութիւն:

Անշուշտ նա քո սրտիդ կուգայ վայել, դուր.
 Եւ կը փոխուի լաւի քո այդ կեանքդ խուլ,
 Սիրեցած է նա քեզ անկեղծ, սրտազին,
 Արի, հասէք ձեր անթառամ փափագին»:

Վերջացրած դեռ չէր խօսքն, իւր, Մարթան,
 Երբ Աշխէնն եղաւ նորան յանդիման.
 Բարկութիւնից այլափոխուած դէմք առած,
 Վառօթի պէս, իսկոյն դէպի վեր թնդաց:

«Միթէ աշխարհում չունիս դու Աստուած,
 Կամ որտե՞ղ են քո մտքերն հաւաքուած.
 Ինչ հիման վերայ դու այդպէս տխուր
 Խորհուրդ ես տալիս, դատարկ ու իցուր.

Արդեօք կըլինի, որ մարդուս սիրան
 Կէսի բաժանեն որպէս մի ծիսն,
 Իսկականի տեղ առողջ, լիովին,

Ապերացնեն կիսատ, շինովին:

Արդեօք ին՞չ կըլնի. որ աչքն մարդուս,
Տեղահան անեն որպէս ծաղիկ, բոյս,
Նորա տեղ դնեն նորա փոխարէն,
Ոչ իսկ մի ուրիշ աչք առատօրէն:

Արդեօք նա կըսպրի՞, եթէ ոչխարի,
Լեարդ՝ ու թոքն հանես նորան ցաւալի.
Համապատասխան ուրիշ լեարդ ու թոք,
Գնես նորա տեղ. կըլնի այդ արդեօք:

Այդպէս Մայրիկ ջան ունիմ սիրելի,
Վերջ տուր խօսքերիդ քո այդ գգուելի.
Միթէ չես ցաւում դատրիդ քո ամբողջ,
Որ սրտիս մէջն պցում ես ժանտախտ:

Ներկայ աշխարհում ես նրան սիրեցի,
Ու կեանքս նորան ես պարզեցի,
Ոչ՝ մի բան մեզի բացի մահուանից,
Զի կարող ջոկել մեր ճիշտ պայմանից»:

Ասաց. ու իսկոյն թիթեռնիկի պէս,
Դիմեց դէպի դուրս, դէպի պարզ հանդէս.
Ողբով, վշտագին ընելով նա լաց,
Իսկ մայրն ապշած, նայելով մնաց:

V.

Անցան բուսկներ, ու շատ շատ ժամեր,
Շատ օրեր ու շատ տեսակ ամիսներ,
Բայց մեր Սուրէնից, կռուի դաշտից լայն,
Զըկար ոչ մի լուր, ճիշտ, բարոյական:

Լաւում է այսօր շէնքից բազմայարկ,
Զայն ուրախութեան ու ձայն գեղունակ.
Լաւում է անուշ քնարի հայկական
Ճոխ, մեղամաղձոտ տաղերն դուրեկան:

Լաւում է ձայներն խուռն բազմութեան.
Ու շշուէն բուռն ծափահարութեան,

Տիրում է այնտեղ ուրախ գեր կատար,
Ու լի պճրանքով ճմլիկ խաղ ու պար:

Տիրում է այնտեղ ուրախ կեր ու խում,
Յնծալի, փառօք, յարգելի զուարճում,
Խմում են այնտեղ պատուական տոստեր.
Ու յիշում Մարթայի միածին դստեր:

Խմում են նորան կենացն առանձին.
Որպէս նորահարս երկամիտ անձին,
Յանկանում են միշտ բարի վայելում,
Հեան սպասող դժսիրտ ամուսնուն:

Ննջարանի մէջ իւր մի անկիւնում,
Աթոռի վերայ տխուր ու տրտում,
Ապագայ ցաւերն լալով իւր խիտ դառ,
Նստած էր Աշխէնն թուլցած, գոյնասպառ:

Յանկարծ ներս մտաւ իւր սպասուհին,
Որին զիմադրեց իսկոյն տիրուհին.
Յանձնեց նորան մի սպիտակ փակ նամակ.
Որով նա զբաղուեց, ընթերցելով տաք:

Մտաբերելով վշտերն իւր ծով,
Կարգաց նամակն աղի արտունքով.
Մտածեց գուցէ նամակն աննշան,
Կուտայ քիչ թեթեւ վշտին անսահման:

Ուղարկուած են նա ասպարէզից լայն,
Որտեղից սպասում էր Սուրէնից մի ձայն,
Նրա հեռ կար մի փոքր ձեռնագիր,
Կնքած դրօշմով Սուրէնի կարմիր:

Գրուած էր այնտեղ. «օր ես լսեցիմ,
Որ սիրուհիս ինձ չէ հաւատարիմ.
Գտնելով իրեն չքեզ ամուսին,

Պսակուեց արդէն հետն միասին:
 Գեհենի այդ վառ կրակն սրտիս մէջ,
 Չունենալով ուժ տանել համալէճ,
 Ստիպուեցայ ես խիստ ցաւակցութեամբ,
 Վերջ տալ իմ կեանքիս ինքնասպանութեամբ:

Իսկ այժմ առէք վերջին բարեաւս,
 Դաւաճան, երկմիտ, Աշխէնին ցաւս,
 Հազորդէք որ ինձ նրա սէրն հաւան,
 Խիստ շարճարանքով դրեց գերեզման»

Երբ որ կարգաց այս համալին անբաղդ,
 Յնցուեց ուղեղն նրա գլխի անխախտ,
 Որպէս կէսավառ, կրակի մէջից մեծ,
 Մումուռիկ ձայնով նա բացականչեց:

«Ո՛վ ամենակարող Աստուած բարերար,
 Անիծեցիր դու ինձ անխնայաբար,
 Միթէ ցաւերս քիչ համարեցիր,
 Որ այժմ այդպէս բազմապատեցիր:

Միթէ չգամ ես նման մի ծիախ,
 Որն էլ մասամբ ուրախ դիրք գիտի.
 Կամ թէ չունիմ ես բաղդ մի միջատի,
 Որի էլ մխիթարքն բնաւ չի համոտի:

Ո՛վ սարք ու ձորեր, ժայռեր ու բարեր,
 Տուէք ինձ խորհուրդ միջոց բարիքեր,
 Ասէք դուք ինզրեմ ումն ես կանչեմ,
 Ու ումն վշտերս այս դառն լացեմ:

Պապանձուի լեզուդ, ս՛վ եղող պատճառ,
 Անգութ ստախօս, վերցողակաշառ,
 Ընդհատուի սէրդ, կոյրնան աչերդ,
 Փշի փոխարկուի մինչև մի հերդ:

Աշխարհիս լոյսն աչերիցս թռաւ,
 Ու իմ լոյս աստղն ինձանից կորաւ.
 Իմ վառ արևն ինձնից խաւարեց,

Ու իմ տաղանսն ոչնչեց, ցրուեց:
 Ո՛հ ի՞նչի ծնեց ինձ մայրս ամբաղդ.

Ու գցեց մէջն ցաւերի անյաղթ.
 Ի՞նչի նա յանձնեց ինձի վշտեր շատ,

Ու ճիշտ կեղծաւոր, երկերես մի բաղդ:
 Էլ ի՞նչնէ մնում աշխարհիս միջում,

Իմ սրտի համար գգուանք, վայելում,
 Եւ ի՞նչ փորձ ինձի բացի մահուանից,

Կարող է փրկել այդ թէժ կրակից:
 Ծնողացս ընտրած ասէք ամուսնուն,

Որ վաղը թող դայ կատարեալ, հասուն.
 Փաթաթի ինձի իւր թևերի մէջ,

Եւ յիշի սիրած Սուրէնիս իմ խեղճ:
 Ասաց ու իսկոյն աչերն իւր բռնեց.

Եւ մի թոյնով շիշ գրպանից հանեց,
 Բաժակի մէջ նա լցեց ու խառնեց,

Ու անի բաշելով սրտին ընդունեց:
 Նորա մայր Մարթան երբ որ այդ լսեց,

Գլխի ծամերն իսկոյն գզգզեց,
 Հրամայեց կանչել նա բժիշկներուն,


Որ մի կերպ հասցնեն նորան օգնութիւն:
 Բժշկապետներն թափուեցին, եկան.

Խելք խելքի տուին խորհուրդի մտան,
 Շատ գիտուն ճարեր արեցին նորան,

Բայց այդ բոլորն իզուր անցկացան:
 Տապալուեց նա շատ կրելով տանջանք.

Ու նա շատ քաշեց անի ու հնոաչանք,
 Վերջին նա անգամ Սուրէնին կանչեց,

Ու իւր անմեղ, կոյս, հոգին աւանդեց...:



ԱՆԳՈՒԹ ԻՐԱՍԱՆ ¹⁾.

Կանստանախնուպօլիսում շքեղ,
Արքունի փառաւոր դահլիճում,
Արքայի հրամանաւ, բիւրեղ
Մեծամեծներն էին սպասում:
Գտնուում ին այնտեղ իշխաններ,
Հարիւրաւոր զօրապետք,
Որտեղ նաև բացակայ չէր,
Շէյխ-ուլ-խալամը, հոգևոր պետ:
Այդ ժողովում ներկայէին,
Ֆէզմարշալներ, մինսարներ,
Գտնուում էին նաև այնտեղ,
Փոքր Ասիայի վալիներ:
Գահի վերայ բարձրագոյն,
Սուլթանն էր մեծագոյն.
Արտասանելով առջին բառը,
Տուեց ժողւին այս բուլթ ճառը:
«Հայերն իմ հպատակում,
Յայտնի է բոլորիդ ինչպէս,
Խռովութիւններ են կազմում.՝
Յնորուածներ լինին սրպէս:
Ընդէմ ցնորուածների այդ,
Խաղաղութեան մէջ ընդ ազգի,
Ոչ սպառնալիք, ու ոչ մի դատ,
Չի պատճառի ու չի ազդի:
Ժամանակիցս հինգ դար ի վեր,
Հայերն իւրենց զբաղմունքում,
Վարոյդ կորատելու համար,
Դանակ անգամ չեն ունենում:

¹⁾ Քաղուածք «Նոր-Դար» թերթից. 1903 թ.

Մտածմունքը աժմ նորանց,
Այնչափ է պղտորել, կեղտոտել,
Ատրճանակներով իւրենց,
Յանկարծ սկսել են զինել:
Նրանց զինուէին, կը պատճառի,
Սուրբ օրէնքն խառնակել.
Զաւակներին Մահամէդի,
Ուղղափառաց, կոտորել:
Պետութեանս մէջն հօրը,
Վաանգ եմ մեծ համարում,
Թողնել անպատիժ, իզուր,
Անիծեալ այդ գեաւուրներուն:
Հայերի կեանքն հիմա վատ է
«Ալլահն» թող ինքն դատէ,
Նրանք անշուշտ ու անկասկած,
Անմենքով են խելագարուած:
Ուստի, վճռած եմ այդ ինձ մէջ,
Այդ հայերին գտնել մի վերջ.
Որով ստիպուած եմ հրամայել,
Մեծ ու փոքրին կոտորել:
Իմ այս արգար վճռիս ընդէմ,
Հակառակող կըլինի ոչ ոք.
Ի՞նչ խօսք ունիք ասէք տեսնեմ,
Ընդէմնալու վճռիս բորբոք»:

II.

Սուլթանն երբ խօսքն ընդհատեց,
Դողն ընկաւ մէջն ժողւի.
Ոչ ոք այդտեղ հակառակեց,
Սուլթանի դատին անուելի:
Հրամայական ձայնով Սուլթանը,

Պատասխան իրեն պահանջեց.

Այդ իսկ ժամին «Շէյխ-Իսլամը»,

Այս խօսքերն արտասանեց:

«Վեհնափառ Տէր. Մեծութիւնդ կեցցէ.

Մարգարէի օրէնքներում Ալլահը,

Հաւատացեալներին պատւիրել է,

Իւր ստեղծածին անմեղ տեղը.

Սպանել երբէք չըպէտք է մի հատ.

Մարդիկս քանի որ մենք,

Անգամ ամենափոքրիկ միջատ,

Ստեղծել կարողանում չենք»:

Յանդգնութեան դէմ Շէյխ-Իսլամի,

Աբղու-Համիդն խիստ բարկացաւ.

Չսպելով հազիւ բարկութիւնն,

«Փուտա փաշան» դէպի դարձաւ:

Կարիչ չերբեզն թռնելով,

Արքայի առջ իսկոյն կանգնեց.

Ու համարձակ զիրք բռնելով,

Այսպէս ահա պատասխանեց:

«Կայսր. Իրաւ է վարձատրուած եմ ես,

Ձերդ մեծութիւնից հեռատես.

Առատ շքանշաններով,

Ու մեծագոյն պարգևներով,

Ես արժանի՞ կըլինեմ արդեօք,

Ձերդ նուիրած նշաններին.

Կամ արժանի՞ կը լինին արդեօք,

Իմ ընկերներն այդ իսկ փառքին,

Կամ թէ արդեօք կը լինի խորքը,

Ձեր փառաւոր անուան համար,

Մեր գեղեցիկ շքնաղ զօրքը,

Երբ որ վիճակն մեզի վիճակի,

Բազուկները մեր գործ դնելի,

Ոչ թէ մեր ոխհան թշնամու ընդէմ,

Այլ մեր հպատակ Ռայաների դէմ,

Որոնց մէջ են գոգոում անաէր,

Մի քանի տասնեակ խռովարարներ,

Այն ժամանակ կը վերջանան

Խռովութիւններն մէջ ընդ ազգին,

Երբ կը բարձրացնենք կախաղան,

Այդ անիծեալ տասնեակներին:

Ծաղկեցնելու առևտուրն,

Ու կայսերական բերկրութիւնն,

Մշակելու մեր դաշտերը,

Հարկաւոր կուգան հայերը:

Ի՞նչ պէտք է ասէ այն ժամ Ռուսեան,

Կամ թէ ի՞նչ կասէ ամբողջ Եւրոպան,

Եւ կամ մամուլն Եւրոպական,

Տուած հրամանին Չերդ Մեծութեան»:

III.

Փուտա-փաշան երբոր խօսքը,

Բոլորովին ընդհատեց,

Սուլթանն դարձաւ դէպ մարշալը,

Հեռեւեալն բացատրեց:

«Փելիսոփայութիւններդ ծակ,

Փուտա-Փաշա մի կողմ դիր:

Այդ փաստերն են բոլորն դատարկ,

Վարդապետութիւններդ ձգիր:

Ռուսիան մունջ է, ոչինչ չի ասիլ,

Նա իմ խոստմունքին ընդէմ չի կանգնիլ,

Ես նրան շուտով կը հաւատայնեմ,

Որ ես նորա հետ դաշն պիտ կապեմ:

Եւրոպան էլ մշտական ծարաւ,
 Ատամներն թափուած բերանում,
 Անճոռնի կնկայ պէս պառաւ,
 Մութմութում է ու յետ քաշուում:
 Այսպէս. ուրեմն իմ կամքն հօրը.
 Անյաղթելի ու զօրաւոր,
 Այսօրուանից յայտարարուի
 Ու սրբութեամբ պիտ կատարուի:
 Չեզանից իւրաքանչիւրը,
 Պարտաւոր է յայտարարել,
 Որ իմ տուած հրամանները,
 Հաւատարմութեամբ կատարելը:
 Իրանից յետոյ գեներալները,
 Պեաին ¹⁾ մօտեցան համոզելու.
 Որ հրատարակէ Շէյխ-ուլ-Իսլամը,
 Սուլթանին գահընկէց անելու:
 Տաճկաց հոգեւոր պետը,
 Մեծամեծներին սիրով ընդունեց.
 Իսկ Սուլթանին գահից ձգելը,
 Այդ օրէնքին չը համաձայնեց:
 Շէյխ-ուլ-Իսլամը զուրանով երդուեց,
 Որ իւր, ստորագրեալներին,
 Չի գոգօի նա ոչ մէկին,
 Որ կոտորեն նրանք հայերին:
 Նաև յայտնեց իւր կարծիքը.
 Անատոլեայում հայերին,
 Կը պահպանեն տաճիկները.
 Ի գէմն հօր զնդակներին:
 Այդպէս էլ եղաւ իրաւի.
 Փոխանակն անելու քայքայ,

¹⁾ Շէյխ-ուլ-Իսլամը

Երեք միլիօն քրիստոնիայի,
 Կոտորուեց. երեք հարիւր հազար հայ:
 Իւրաքանչուր Օսմանցին,
 Պաշտպանում էր հայերին.
 Իւր դարեւոր հարեանին,
 Ու անիծում Սուլթանին:
 Այս էր ահա հրամանը,
 Անողորմ ու ահուելի,
 Երբ բացատրեց թարգմանը,
 Մեծն Համիդ-Սուլթանի:

Ի Ս Դ Ա Ր Չ Ը .

Արտասահմանից հայրենիք գալիս,
 Ճանապարհին էի ես լալիս.
 Տեսանելու դժբաղդ մայրիս,
 Հեռսւ տեղէն էի գալիս:
 Իեւ չէր լրացած տասնուհինգ տարս,
 Երբ բաժանեց ինձի մայրս,
 Չորս տարուայ լայն ես ընթացքում,
 Պանդուխտութիւնից է գալս:
 Տասնիններորդ դարս լրացաւ.
 Տեսած եմ ես ամենայն բան,
 Թէ վիշտ, թէ լաց, թէ պէս պէս ցաւ,
 Թէ անասուն, թռչուն, գազան:
 Չէնք ու զրահս ես մոռացայ,
 Ու հայրենիք վերադարձայ,
 Մայրիս տեսայ ուրախացայ,
 Եւ կարծես թէ զուարճացայ:
 Մայրս զրկեց ինձի լալով.

Շատ կրատներ կրկին տալով,
 Պանտուխտ որդու վերագարձով,
 Մխիթարուեց, գուրգուրելով:
 Չորս տարուայ մէջ մօրս ընդէմ,
 Ծունկ չոքեցի, աղաչեցի,
 Մեղքս վզիցս որպէս մի վեմ,
 Պաղատելով փարատեցի:
 Մայրս մեղքերս քաւելով,
 Տուեց համբոյր արքայութեան.
 Վերաս կրկին մերթ նայելով,
 Տուեց նշան անմահութեան:
 Մօրս ես խոր գլուխ տալով,
 Եղայ նրանից շնորհակալ.
 Նորա ձեռքը համբուրելով,
 Մնացի որպէս բռնակալ:
 Մայրս ինձի կեղծ գուրգուրեց.
 Կեղծութեամբ նա ինձ սիրեց,
 Ունեցածիս տիրելուց յետոյ,
 Երեսիս անգամ նաեւ չուզեց:
 Այդ այն մայրն էր, որ դար առաջ,
 Խնդրից ինձմէ պաշտպանութիւն.
 Մատիկներս մոմի տեղ վառած,
 Տուի նորան հագորդութիւն:
 Այդ այն մայրն էր, որ օրերով,
 Քաղց էր կրում ասպարէզում.
 Նորա քաղցն ես զսպելով,
 Հաւատարիմ էի կարծում.
 Այդ այն մարն էր, որ անցեալ օր,
 Գրկեց ինձի որպէս մոլոր.
 Ինձի որդու տեղ հաշուելով,
 Ունեցածս խլեց բոլոր:

Ի՞նչ վատ բան էի արել ես նորան,
 Թող գատէ ինքն սուրբ երեք խորան.
 Լաւութեանս նա փոխարէն,
 Վարձատրեց առատօրէն:
 Մէջքս կտորեց, վիզս ծռեց,
 Աչքերս նա կուրացրեց,
 Կարծելով թէ ինքն հօր,
 Կապրի որպէս մի թագաւոր:
 Դուք էլ ինձի պէս չընկնէք ցանցն,
 Որոնք պատրաստուած են մայրիկներով չար,
 Դուք սուէք առաջ նորանց ձեր հարցն,
 Թէ չէ կը տանջուէք ինձ պէս դարէ դար:

ՎԻՐԱՆՈՐ ԹՈՉՆԱԿ.

Կար ժամանակ, որ անդադար,
 Աշխատում էի որդկանցս համար.
 Որ նրանք և ետ դարէ ի դար,
 Մայրենի գոչեն իւրենց բառբառ:
 Կար ժամանակ, որ թևերս
 Ազատօրէն կը շարժէի,
 Հեռու տեղէն ես լոյսերես,
 Բալիկներիս կը հաճէի:
 Կար ժամանակ, ընկերներս
 Նախանձում են ինձի շատ.
 Որովհետեւ ծագուկներս,
 Պաշտպանուում են միշտ առատ:
 Չար որսորդը կայծակի պէս
 Գտաւ ժամանակ յարմար.
 Վիրաւորեց, արեց ինձ կէս,

Ստիպեց տանջուել անդադար:

Վէրքս կապած, հազիւ հազ,
Գնացի նորա թշնամուն զանգատ,
Թշնամին լացիս նայեց նուազ,
Ու խոստացաւ մրցել հանդարտ:

Սկսուած և իսկ այդ օրից,
Տանջուամ եմ չարէչար,
Սպասելով վէրքին թևիս,
Ե՛րբ կըլնի մի անկեղծ ճար:
Կը թռչկոտեմ, կըլնեմ ես քունս,
Կըզգամ նաև զուարճութիւնս,
Երբ որ վէրքիս լինի մի ճար,
Կը խմեմ հանգիստ ջուր զովարար:

Է Չ Ս Ի Ա Յ Ի Ն .

Էջմիածինն ես. անունդ է հին.
Անցած են գլխովդ դարեր անազին.
Պարգևուած նուէր ես դու մեր աշխարհին,
Ափսոս չեն գնահատում քեզի թանգագին:
Ծնուել ես, աճել, դու մէջն փառաց.
Միլիօնաւոր մտմեր են քեզի մէջ վառած,
Հնչեց քո ժամը. կրիք դու փասս.
Վիճակուեցաւ, որ դու պէտքէ որբ մասս:
Փառաւոր օրերդ անցան, զնացին,
Ազգականքդ հեռոյ թշուառ մնացին,
Վերադ թշնամիքը ուրախ խնդացին.
Ափսոս է անունդ սուրբ «Էջմիածին»:
Գրդաց աշխարհիս ծայրէց մինչի ծայր,
Որ դու քո փառքից ընկած ես ի վայր.

Կորցրած ես դուք քո սուրբ զօրութիւնդ.
Ո՛ւր մնաց ուրախ քո բերկրութիւնդ:

Ազգակիցներդ արձակեցին ձայն.
Աշխարհիս տակից լսուեց արձականք,
Պատասխանի տեղ սուրբ ազատութեան,
Հսուամ էր միայն սխ ու հնազանք:
Հայրենակիցներդ նայում չեն վրայ բնաւ.
Հողեւորներդ են սրպէս սև ազոտւ,
Թշնամուդ ընդդէմ ծրագրով խխա դառ,
Ի՞նչ անի միակ Հայրիկն Վեհափառ:

Յոյս ունիմ որ դու քո սուրբ զօրութեամբ,
Վերակուկանգնես առաջուայ նման.
Երբ որ որդիքդ մեծ ուրախութեամբ
Բնից կը գարթնեն այլերի նման
Հիմքդ դրուած է սորանից շատ հին.
Երեք հարիւր և երեք թուականին,
Կարծում ենք միակ ես, առաջինն,
Իսկ լսելով այժմ դու ես վերջինն:

Գ Ի Շ Ա Տ Ո Ւ Ա Ր Յ Ի Ի .

Փուկ ես թևերդ զիշատու արծիւ.
Մի՞թէ մինչի այժմ չես եղած դու քունս,
Մի՞թէ քո կեանքում դու հօրք, հազիւ
Ես մտածում վերջ տալ դու քո կեղծ հոգունս:
Աշխատում ես միշտ տարածել ուղիւ.
Գոռոզ թևերով զխմում ես յառաջ,
Ուզում ես ախրել դու մեր աշխարհին.
Կարծելով քեզի որպէս բարեհաճ:
Շատերի կեանքին եղած ես պատճառ.

Շատոց զցած ես դու փառքից հաստատ,
Շատերին արած ես թոյլ, ուժասպառ,
Մըթէ դորանց դէմ չըկայ ոչ մի դատ:

Գուռոզ ու հպարտ գլուխ բարձրացրած,
Մըթէ սրտիդ մէջ չըկայ ոչ մի կայծ.
Քեզնից թոյլերին նայում ես շատ ցած,
Ու նետում վրան քո ուժեղ հայեացք:

Դու ինքդ քեզ միշտ զօրեղ ես կարծում,
Ձեռքդ ընկնողին կործանում, լափում,
Նման ես թողած հին, հին դարերում,
Արքայ Աղէքսանդր Մակեդոնացուն:

Որն էլ քեզ պէս ասում էր «ես» եմ,
Երկրագունդն ոտքիս տակոյն պիտ քսեմ.
Նորա ազգն թոյլ, թշուառ, անպաշտպան,
Թափառում է այժմ գնչուհու նման:

Արծիւ՝ այ արծիւ, մի հպարտացիր շատ.
Կեանքդ ապագայ կըլինի խիստ վատ.
Կուգայ ժամանակ կը լինի քեզ դատ,
Դու այդ փառքին միշտ չես մնալ հաստատ:

Կեանքդ նման է մի խաւար ազգի.
Որի վարմունքն է ինչպէս կծու սոսի,
Որին լաց ու կոծ բնաւ չի ազգի,
Որի սրտի մէջ լինում է միշտ ռիս:

ԱՆԲԱՂԴ ՄՐՁԻՒՆ.

Ձքնաղ ու շքեղ, սիրուն ես միջատ.
Փայլում էիր դու սրպէս լոյս աստղիկ,
Բազմացել էիր դաւակներով շատ
Դարեր շատ առաջ. փոքր դու մըջնիկ:

Յայտարարուել են, մեր նախկին ազգից.
Կառաւարուում իր արդար մշտեկան,
Անունդ է մնացել հայոց քաջ Հայկից,
Ունէիր առաջ դու հզօր պաշտպան:

Նախանձեցին քո կեանքիդ ապահով.
Իրաւ է քեզ տուին մեծ վնաս,
Լուացին բոյնդ տաք, տաք արիւնով,
Կեցցէ. որ բոյնիդ հաստատ կումնաս:

Չար մարդիկ քեզի շատ շարշարեցին,
Անմեղ արեւնդ իզուր թափեցին,
Շատ անձեր նորանք նահատակեցին.
Բայց ինչո՞ւ համար քեզի թողեցին:

Լեզուդ կտրէին, անէին քեզ կէս.
Եթէ նորանք քեզ կարծում էին հեզ,
Գոնեա իմացող մարդիկը բիւրեղ,
Կը տեսնէին որ մեռած ես անմեղ:

Այդ մանր կեանքն կը զգայիր թեթիւ
Քան թէ սոսկալի ահեղ տեսարան,
Ունենում ես միշտ աչքերիդ առջև.
Անմեղ, թշուառին, մէջն տաք արեան:

Կրած ես դու շատ սոսկալի տանջանք.
Պատճառն որ դու թոյլ ես, ուժասպառ,
Քեզի հետ նաև քո մօտ ազգականք,
Մնացած են անհոգ, անպաշտպան, թշուառ:

Կար ժամանակ, որ քո ազգդ ունէր,
Հոչակապետ, զօրեղ շատ քաջեր.
Որոնք են նման հայոց Աղասուն,
Ու մեր զօրավար սուրբ Վարդան քաջուն:

Հեզ դուք մըջիւններ շուտ ոտքի ելէք.
Թշնամու ընդդէմ շուտ բողոքեցէք,
Մըթէ մոռացար դուք ձեր քաջերուն,

Որոնք խմել են թշնամու արիւն:

Հարիւր հազարուր նահատակները
Վրէժ են խնդրում ձեզանից, վրէժ:

Որոնց արիւնով ներկուած պատերը,
Բոստոնից կանցնի մինչևի Դաւրէժ:

Մինչև երբ նորանք ձեզի ջախջախեն:

Մինչև երբ նորանք ձեզի շարչարեն:

Մինչև երբ նորանք ձեզի խիստ տանջեն,

Ա՛խ. երբ նորանց բորբոք կրակով կը վառեն:

Մինչև երբ պէտք է ձեզի կործանեն,

Մինչև երբ պէտք է նրանք ձեզ ատեն:

Մ նչև երբ պէտք է ձեզի խորովեն,

Ա՛խ. երբ նրանց արգար դատով կը դատեն:

Ամբողջ պայտոյ դու գոլոր տարին,

Աշխատում ես խիստ, անում միշտ բարին,

Վերջին մնում են նորանք օտարին,

Իսկ դու մըջիւնիկ, վերայ չոր քարին:

Քաջեր, միջատներ, դուք թոթափուկեցէք,

Հերիք է լուէք, դուք բողբոջեցէք,

Մինչև երբ քնէք, արթնացէք բաւ է:

Մըթէ ձեզ համար այդ կեանքն լաւ է:

Ժամանակ որ էր ձեր որբ մնալն:

Աստուածանից ձեզ կուգայ զօրութիւն,

Մի խնայէք ջանք զօրծէք ձեր անձն,

Ուժեղ զօրութեամբ կազմէք միութիւն:

Ձեր սրբոյ ազգն արեան գետի մէջ,

կը խեղդուի շուտով, կանի ել և էջ:

Այլազգիք միատեղ անում են միշտ վէճ:

Կուզեն կործանել ձեր սուրբ ազգին խեղճ

Յոյաներդ Ասարծուց բնաւ մի կարէք:

Ձերմեռանդ սրտով նորան աղօթէք,

Մի կարծէք որ ձեզ չի գթայ երբէք,

Նորա զօրութեամբ թշնամուն կը յաղթէք:

Միջատներ էք դուք. մարմնով փոքրիկ:

Հաւատացած եմ որ խեղճով առաս,

կը ցրէք թշնամուն որպէս փոթորիկ,

Որից յետոյ միշտ կը լինէք դուք ազատ:

Ձեր լաց ու կոծը, ձեր աղերսանքը,

Շարժել է գութը, Աստուծոյ սրտի քար:

Ձեր անձ գոհելը, արիւն թափելը,

Բաւ է համարուած, կըլինի ձեզ մի ճար:

Ոսկի էիք դուք, դարձել էք արծիճ:

Ձեր հարցն փոխուել է չնչին խօսքի,

Ծնուած է մէկը կըլինի փրկիչ,

Արճիճ էք հիմա, կը դառնաք ոսկի:

Միայն որ դուք ձեր գոհերի համար,

Որոնք եղած են բոլորն մոխիր,

Ընկնէք նորանց պէս արեան ճանապարհ,

Ընկէք գոհերին դուք վրէժխնդիր:

Ուրեմն այսպէս. ասածս լսէք:

Ու մի արէք դուք էլ պոռնիկութիւն,

Դուք խեղճ միջատներ կազմակերպուեցէք,

Որ գոչենք միասին կեցցէ... Միութիւն...

ԳԱՅՈՆ ՈՒ ԱՅԾԵԱՄԸ:

Գայլն ունեցած պաշարն վասնելով,

Թափառում էր չոր դաշտերում, լայով:

Որ մի կեղծ կերպով կամ մի հնարքով

Նա քիչ լիանայ, քաղցն գսպելով:

Նա այդ գանազան մտքերով իւր խառ,

Դիմեց դէպ յառաջ, դէպի սարն սառ,
 Նման ազգերի կոչող ուղղափառ,
 Հայցում էր չորս կողմ աչքերն իւր վառ:
 Բարձրացաւ սարը. թէկուզ կիսաչափ,
 Կանգ առեց կէսին, բացականչեց վայ.
 Օգնութեան հասաւ, չարեց նորան խար,
 Այծեամբ թշուառ նման որպէս հայ:

Անցաւ, նա այնտեղ իւր քաղցն դսպեց.
 Միևնոյն գծով և յետ արշաւեց,
 Իւր օգնականին, թշուառ այծեամբին,
 Կարծես բնաւին նա չըճանաչեց:

Անցան տարիներ միմեանց յետևից.
 Համակիրներով իրեն բոյնն կազմեց,
 Նաև չարութեամբ մեծ գանձեր դիզեց,
 Բայց այդ կեղծ կեանքն երկար չը տևեց:
 Ունեցածովն իւր չըբաւուեցաւ.

Իրեն ուրիշից զօրեղ իմացաւ.
 Փորձեց չորսի դէմ մենակ կռիւ տալ,
 Որից յետոյ նա ուժահատուեցաւ:

Կրկին այծեամբ նորան տեսնելով,
 Կարծեց թէ իրեն չի հասնիլ վառս,
 Դժբաղդ վիճակից նորան փրկելով,
 Հասաւ իւրեն մի անտերտելի դաս:

Գայլն իւր մօտիկ բարեկամի հետ,
 Խորհուրդ նստեցին միջամտեցին.
 Որ խեղճ այծեամբին հասցնէն մի նետ,
 Որն պատճառի նորա կարճ անձին:

Նորա որդիքը գայլի հրամանով,
 Այծեամբ բոյնի դուռն կտորեցին.
 Հրացանով, սուրով, թնդանօթներով,
 Նրա ունեցածն նախ թալանեցին:

Ընթերցուած դէպքն իրաւ կատարեց.
 Ու մեր այծեամբին դառն վիշտ թողեց,
 Հազար իննհարիւր երեք թուականին,
 Վեցերորդ ամսուայ տամուերկուսին:

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐ.

Դուք հայ մանուկներ, լայն փողոցներում,
 Թուչկոտում էք միշտ, խաղում, զուարճանում.
 Սպասող ձեզի կեանքին ապագայ,
 Դուք չէք մտածում ու հոգ չէք տանում:

Երանի կուտամ ձեր կեանքին շքեղ.
 Կը նախանձեմ միշտ ձեզի մանուկներ,
 Համեմատելով իմ կեանքն ազեղ,
 Ձեր խաղաղ կեանքի ու խելքի հետ ձեր:

Ձեր մտածմունքն է գիշեր թէ ցերեկ,
 Դէպի այբու բէն, դէպի գնդակ, վեգ,
 Ափսոս այդ կեանքն դուք շուտ կը վատնէք,
 Մեծանալով դուք ինձի պէս կը լինէք:

Ես ինքս էլ հայեմ, եղած եմ մանուկ.
 Ձեն չափում այժմ իմ կարգ ու վարքս.
 Ծնողացս միակ զաւակն եմ յատուկ,
 Մտաբերում եմ իմ անցեալ կեանքս:

Մանուկ հասակում սիրում էի միշտ,
 Գրքեր ընթերցել, ազատ զբօսներ.
 Ձը թողնելովք զբաղում էի խիստ,
 Հրացանի վարժուել, սուրբեր գործածել:

Ծերուկ հայրիկս, նաև իմ մայրս,
 Սուր գործածելուն չէին համձայնում.
 Անկրթեալ մնաց. իմ փայլուն վարժս.

Իսկ այժմ նորանց եմ ես միշտ ասում:
 Ներկայումս ինձ համարում եմ միշտ,
 Որ կեանքիս կէսն է յատուկ կորած.
 Նաև ունեմ ես ինձի մի մեծ վիշտ,
 Որ այդ հարկաւոր արհեստն չեմ սովորած:
 Դուք էլ մանուկներ լաւ աշխատեցէք.
 Ձեռմեռանդ սրտով գործել սովորեցէք,
 Ձեր հօր ու մօրն բնաւ մի լսէք,
 Խաղ ու պարի տեղ, դուք նորան գործէք:
 Որովհետև այժմ ներկայ աշխարհում,
 Հասել է ժամն պէտքէ ելնել վեր.
 Կուշտը բաղցածիս մանր է միշտ բրդում.
 Պէտք է պաշտանուել զէնքով մահաբեր:

ԱՂՔԱՏ ԶԵՒԱՅՈՂ.

Մշտեկան դուքեզ դժբաղդ ես կարծում.
 Ու միշտ մարդկանցը յիմար համարում,
 Մարդուս բաց արձակ դրամն խլելով,
 Քեզի մերձակայ մարդկանց դէմ գովում:
 Ողորմածներին ընում ես դու լաց.
 Ու թշուառ կեանքդ նորանց ես ասում.
 Նորանից մի կերպ առնելով չոր հաց,
 Հեռանում ես դու ծաղրում, բամբասում:
 Կան կոյրեր, կաղեր, կան բորոքեալներ,
 Որոնք բանելու չունին ոչ մի ճար,
 Իսկ դու անպիտան, որպէս մարդակեր,
 Խափում ես նորանց, ծծում անդադար:
 Թիկունքդ քո լայն, շինքդ հաստատ.
 Ուժդ քո նաև ուժիցս առաւել,

Բայց ինչո՞ւ համար դու՛ յիմար անդատ,
 Թոյլ ես տալիս քեզ ժողովք ժողովել:
 Քո անգահ անձով, դու չես լիանում.
 Հեզ մարդկանց ընդդէմ աղքատ ձեռնում,
 Եթէ քեզ մարդիկ համեստ քննեն,
 Քեզի խաբեբայ հտրուստ կը գտնեն:
 Քո պատառոտուած քայքայուած զգեստդ,
 Աղերսում է սիրան քեզի նայողին.
 Իսկ քո անամօթ անպիտան դէմքդ
 Դէմն չի պատկառում քեզ ճանաչողին:
 Թէկուզ ունիս քեզ, քիչ հարստութիւն,
 Ադդ քեզնից բացի ոչ ոք չի իմանում,
 Աշխարհիս վերայ լաւ կեանք չես վարում,
 Կեղտոտ դէպքով ես ձեռք բերում ապրում:
 Մինչև երբ պէտք է այդպէս թափառես.
 Անիրաւութեամբ քեզի հաց ճարես,
 Միթէ չի ճարում այնպիսի մի գործ,
 Որի մէջ դու միշտ հանդիստ պարապես:
 Լսիր խօսքերս խղճա՛ քո կեանքիդ
 Մի պարապիր այդ մոռյլ գործերով,
 Խնդրիր քո մօտիկ յատուկ ընկերիդ,
 Քեզ շահեցնել, փոքր գործ տալով:

ՊԱՏԻՐ ՄԱՅՐԻԴ.

Ծնուել ես, աճել, դու աշխարհիս մէջ,
 Կեանքդ ապագայ սպասում է մահ,
 Դու քո մայրիդ հետ անում ես միշտ վէճ.
 Կարծում ես որ դու կը բարձրանաս գահ:
 Քո դժբաղդ մայրդ քեզի ծնել է.

Պահպանել է քեզ, անցրել օրեր վատ,
Զրգիտես դու թէ ինչ չարչարանք է,
Տանջուելով կրել մայրդ հարազատ:

Օրօրօցիդ դէմ եղել է նա լաց,
Անքուն է ֆնացել, տուել է քեզ հաց,
Կերակրել է քեզ, ուզել ես դու կաթ,
Անկեղծ հոգացել սրպէս քո ծառայ:

Այո, պարտաւոր էր, նա քեզ պահպանել,
Քեզի կատարեալ պատանի օծել,
Հասակիդ հասցնէր, քեզի նա կարգեր,
Այնուհետեւ նա քեզնով պաշտպանուէր:

Ծանր քո հոգսդ մայրդ քո քաշեց,
Մի կերպով քեզի հասակիդ հասցրեց,
Զափիդ հասցնելով քեզի նա կարգեց,
Ու վերջին յոյսն քեզի նա կապեց:

Սրտիդ համեմատ հասար փափազիդ
Մօրդ արգիւնքով եղար բաղդաւոր,
Քո համեստասիրտ շքեղ սիրունիդ,
Վարւում է մօրդ հետ սրպէս սգաւոր:

Սիրունուդ դու հետ սպրում ես քաղցր,
Սրտիդ փափազը նորան ես յայտնում,
Որից քո մայրը հաշուում է բարձր,
Երեսին անգամ բնաւ չես նայում:

Երբ որևիցէ տալիս է խրատ,
Քեզի քո բարի մայրդ հարազատ,
Դու քո կնոջ հետ մտածում էք վատ,
Ու մայրիդ վերայ ծաղրում շատ ու շատ:

Իւր փորի մէջ նա ունի ծանր վիշտ,
Որ նրան շատ խիստ ատում ես դու միշտ,
Մի չնչին խօսքում, ու մի դայրանքում,
Նախատում ես դու, թէ սուտ կամ թէ ճիշտ:

Մտաբերում է քո ծնուած օրը:

Քո մեծանալը ձիգ ու հետզհետէ,

Մտաբերում է նա այն բոլորը,


Որը կրել է քեզնից գրեթէ:

Մի անիլ այդպէս, մայրդ է քո խղճա

Քեզի էլ կը հասնի այդ իսկ վիճակն,

Դարձիր խելքիցդ, մեղքերդ զղշա,

Մի տուր քո մօրդ անհիմ տանջանքն:



ԽՄԷՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԿԵՆԱՑԸ.

Պարպէք բաժակներ, պարպէք դուք շիշեր,
Գուցէ մեր ազգն ձեզնով մխթարուի:

Կեր ու խումի մէջ, խնջոյքներում ձեր,

Յիշեցէք մեր սուրբ ազգին վիթխարի:

Այժմ սիրալիր դուք ուրախացէք,

Վերցրէք դուք բաժակք, կեցցէ է գոռացէք,

Ժամանակին դուք խոնաւ ողբացէք,

Բայց ձեր բնագգին դուք մի մոռացէք:

Ներկայ դուք ժամին ուրախ խնդում էք:

Բաժակներն դուք լիքն ծծում էք,

Ինչ վիճակում է գտնուում այժմ

Ձեր սրբոյ ազգն, արդեօք դուք գիտէք:

Խմէք դուք տղերք, կենացն հայրենեաց:

Խմէք, ցնծացէք, եղէք դուք բարի,

Թող ձեր ոխերիմ ակն թշնամեաց,

Անկուսն չը տեսնի տարից առ տարի:

Խմեցէք տղերք ու ուրախ եղէք:

Ձեր հայրենիքը աշանց մի ձգէք,

Ուրբի կը կանգնի ու կը բողոքի:

Ձեր փոքր ազգն. հիմա կամ երբէք:
 Ձեր գուաճանքը, ու ձեր շարժ գալը,
 Երբ լսում եմ ես ձեր շրջաններում,
 Եւ ձեր մեր հայ ազգից լինելը,
 Բաց, արձակ սիրտս է միշտ բաբախում:
 Արիք զուք աղերք, արիք աշխատենք.
 Ձանկնք մենք որպէս արքայ Արտաւազգն,
 Մեր հայոց ազգին մշտեկան օգնենք,
 Որ յոյսով գոչենք. կեցցէ, մեր ազգն:



ՀԱՅՐԻԿՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ¹⁾

Կար ժամանակ. որ ընդհանուր
 էջմիրածնից, կաթուղիկուսը,
 Երբ գուրս դնէր հոբերն իւր,
 Ոտքի կեղներ ողջ Կովկասը:
 Կը դղրդար նորա ճիշը
 Տակն ու վերայ կը լինէր գիծը
 Ձանգի գեաից սկսած մինչև
 Կուրա գետի ափի նիքը:
 Կը շապալէին գեներալներ,
 Ու աստղագարդ գնդապետներ,
 Երևելի, աներևոյթ,
 Կայսերական լրատներ:
 Իսկ հայրիկն հայոց աժմ,
 Գալիս է գնում, երթ, գարէ հաս.
 Ոչ ոք նորան չի հարցանում,
 Ինչի՞ եկար ու ո՞ւր կերթաս:
 Այս անգամ նա ցաւով եկաւ.

¹⁾ 1902 թիւ.

Դիմեց յույսով դէպի իշխան,
 Որ մի կերպով գտնէ նա բան,
 Գաղթականի վշտին դարման:
 Վարդապետներ քանի ընտիր,
 Մեր Հայրիկն իւր հեա առած,
 Կառքի վերան երկու «շաթիր»,
 Դէպի Թիֆլիս անցաւ գնաց:
 Անցաւ պալատ փոխարքայի.
 Պայծառափայլութիւնը նորին,
 Ելաւ յառաջ վեհափառի,
 Մինչ գլուխն սանդուխտներին:
 Բարեհաճեց նա համբուրել,
 Նորին օծութեան աջը.
 Որից յետոյ երկարատև,
 Տեւեց նորանց խօսուածքը:
 Խօսելով նորանք որևից է բան,
 Խնդրեց Հայրիկը նորանից մի դէպք.
 Ասում են ինքն, մեծ փոխարքան,
 Խոստում տուեց. «էհ բան չունէք»:
 Վերջն ի վերջոյ այդ խնդրքով,
 Լուծեց իշխան փոխարքան.
 Որն յայտնի է իւր դիրքով.
 Տասն յօդուած պատւիրան:
 Այս էր Հայրիկի հայոց,
 Աղերսալից, մեղմ խնդրքը.
 Որն լուծեց համար բիւրոց,
 Կովկասի մեծ համապետը:



Ո Ղ Բ.


Հայրենակիցներս ողբացին,
 Քուրդերը կալուածները խլեցին,
 Արաքս գետն անցնելով,
 «Մասիս» սարին դիմեցին:
 Սուրբ էջմիածնին հասնելով,
 Վշտից փոքր ու մեծ լալով,
 Սուրբ աթոռին մօտենալով,
 Հայր են խնդրում ողբալով:
 «Վեհափառդ կեցցէ. ով հայր,
 Ով թողեց մեզ առանցի մայր,
 Ով գցեց մեզի սար ու ձոր,
 Դէպ էջմիածին, սուրբ աթոռ:
 Տաճիկները կողոպտեցին,
 Ունեցածներս խլեցին,
 Շատ անձեր նորանք սպանեցին,
 Մտիպուած փախչանք էջմիածին:
 Չարչարում են սարսափելի
 Որոնք են անզրչագրելի
 Մէկի փորն սուր են խոցում
 Միւսներին զխատում
 Մայրերի փորերն են ձեղբում
 Մանկիկներին դուրս քաշում
 Ծողների աչքի առջև
 Սուր դանակով կտրատում.
 Միմիանց հեռ գալիս գրազ,
 Պատեանից սուրն հանում վրազ,
 Ակնթարթում մի թոցնում,
 Երեխայի չորս գլուխը մի հաս:
 Մի՞թէ մենք Աստուծոյ ստեղծուածները չենք.

կամ թէ նման ենք ոչխարներէ հեզ,
 Մի՞թէ մենք Աստուծուն միշտ հայնոյում ենք,
 Որ անտանելի տանջում են խիստ մեզ:
 Մեր մահը Տաճկաստանում,
 Գնով է չնչին ծախուում.
 Թէ աղաչի, թէ մեղանչի,
 Եւ պաղատանք չի ազդում:
 Մենք մեր տեղից գաղթած գալով,
 Արարատեան երկիրն լալով,
 Կարծեցինք թէ հայրիկը
 Խորհուրդ կուտայ մեզ քարով:

ՕԳՆԻՐ ԱԶԳԻԴ.

Կան մարդիք. որ իրենց կեանքում,
 Աշխատում են գործել բարի.
 Իսկ ոմանք այդ չեն ներգործում,
 Ու դիմում են դէպի չարի:
 Կան մարդիկ. որ գիշեր ցերեկ,
 Մտածում են հիմա ու միշտ,
 Թէկուզ նորանք մնան և մերկ,
 Բայց աշխատեն իրենց մի վիշտ:
 Կան մարդիկ. որ միշտ վնասում են,
 Գտնել մի դէպք, կամ մի հնարք,
 Որ հեշտութեամբ նորանք գանեն,
 Բարոյապէս իւրենց մի վարք:
 Բայց կան մարդիկ. որ մշտեկան,
 Իւրենց խելքը գործ են դնում,
 Վերայ ժլատ հարուստութեան.
 Ու անագին գանձեր դիզում:


Այդ գանձերը նորանց ձեռքում,
 Չեն մշակում իւրենց օգտին:
 Ոչ որբերին քաղցած դիրքում,
 Ոչ էլ իւրենց թշուառ ազգին:
 Մի՞թէ նորանք կը մնան անբաղգ,
 Եթէ քիչ ազգին նուիրեն,
 Կամ թէ կը տանջի նրանց ժանտախտ
 Թէ աղքատին նորանք օգնեն:
 Այդ գանձերը կը մնան վերջում,
 Որդկերանցը նորանց յետ հաս.
 Որոնք կը վատնեն կարճ միջոցում,
 Ու գանձերը կանեն մաս մաս:
 Վանդակում են նորանք ապրում.
 Ուռանառակ կեանք միշտ վարում,
 Իւրենց անվարժ որդկանց համար,
 Չարչարանքով աշխատում:
 Լաւ չէ արդեօք իրենց ազգին,
 Թողնեն նորանք մի յիշատակ.
 Տալով իրենց ի մէջն անձին,
 Անխնայաբար մի վատակ:
 Մի՞թէ չեն լսում այն աղերսանքը,
 Որ փոզոցներում գոչում են աղքատը.
 Եթէ նորանց տան իսկ աւելնորդը,
 Մի՞թէ կուպարպեն նրանց լիք գրպանք:



ՆՈՐ ՏԱՐԻ.

Կանգնեց այսօր փոխ նոր տարին,
 Բարեկեց նա սար ու բարին.
 Ուրի հանեց նա բիւրին,

Տալով նոցա չար ու բարին:
 Շատերին նա արեց բարի,
 Շատերին ենթարկեց չարի,
 Բայց իմ ներկայ վշտիս դառն,
 Չարեց ոչ չար ու ոչ բարի:
 Ոմանց վիշտս ես բաց արիմ,
 Որն սպանում եմ դարէ ի դար,
 Ստուգելով ինձ ասացին,
 Մի՞թէ չըզատար սորան մի ճար:
 Շատերն ինձ արին հանդիստ.
 Չթողին ինձ հենց այս գաբուն,
 Իիմել քաղքին արքայանիստ.
 Ասին սպասիր դու նոր տարուն:
 Այս տարի էլ ես անց արի.
 Իարձեալ մնացի մէջն ցաւի,
 Օտար խօսքի միշտ լսեցի.
 Բայց վիճակս չը փոխուեց լաւի:
 Հասաւ տարին. բայց ինձ ինչ փոյթ,
 Հարկադիր է միշտ նախատել,
 Խորամանկաց որ չունեն գութ.
 Որոնք օրին են այս հասցրել:
 Բայց ինձ բոլւ է. շատ խափեցին.
 Ու սպասել ստիպեցին,
 Սպասելով տարեց-տարի,
 Փոխուեց ինդիրս մեծ սարի:
 Համբերութիւնս է սպասել.
 Պէտք է գանել միջոց յարմար,
 Նոր տարուն էլ յոյս չը կտպել,
 Ազատութիւն սուրբ ստանալ:



ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԲԱԺԱՆՈՒԻԸ:

Մնաք բարեաւ սարեր, ձորեր,
 Անցած կեանքդ էլ չի դառնայ,
 Մի մոռացէք ինձ սուրբ հողեր,
 Իսկ ես ձեզի չեմ մոռանայ:
 Կը պահեմ սուգ, կը հագնեմ ես սև,
 Եկեղեցուն սուրբ կնուիրեմ ջան,
 Կը թափառեմ ես որպէս կեղծ խև,
 Գուցէ Աստուած վերաս խղձայ:
 Մարմինս է այժմ իմ այլաշտպան,
 Կեանք եմ վարում ես խիստ աղքատ,
 Պահուած ունեմ հայրենական,
 Մեղքեր խառն ես շատ ու շատ:
 Համարուած եմ պարտաւոր,
 Պէտք է քաւեմ մեղքերս դաժան,
 Այնուհետև ես բաղդաւոր,
 Լինեմ ձեր սուրբ հողին արժան:
 Կը թափառեմ երկրէ-երկիր,
 Կը հաղորդեմ ձեզի լուրեր,
 Կամ կը գրեմ ձեզի մի գիր,
 Կամ կը դառնամ ձեռքիս սուրբեր:
 Մութ անտառներ մի գայրացէք,
 Եղէք դուք ինձ հաւատարիմ,
 Ձեր հին տիրոջ մի մոռացէք,
 Մի կորուսէք դուք հետքս իմ:

ՀԻՆ ՆԱԽԻՉԵՒԱՆ.

Փոքր բաղաքս ես դու հայաբնակ.

Մէջդ ապրում են նաև այլազգիք,
 Ապրելու կողմից դու ես բաց արձակ,
 Սակայն կեանքիցդ անցած են տարիք:
 Բացել ես ներկայ մարդկանց ճանապարհ,
 Եղած ես դու մեր նախնեաց իշխան,
 Դորա համար և քո սեռիդ յարմար,
 Տուած են անուն քեզ Նախիջևան:
 Այդտեղ է բացուել առաջին դուռն.
 Այդտէջ են աճել Սեմ Քամի որդիք,
 Քեզի է զիպել առաջին սուրն,
 Քեզ են այցելել նախնեաց կենդանիք:
 Դեռ չըկար Փարիզ, դեռ չըկար Լօնդօն,
 Դեռ չըկար ներկայ նշանաւոր սեղք,
 Ոչ Նիւ-Յորկ, և ոչ մեծ Բօստօն,
 Եւ ոչ Հոլանդիայի շատաբնակ գեղք:
 Հին-հին դարերից դու խորասուզուած,
 Եղած ես բաղաքն մեր նախաբնակ.
 Ունես դու դաշտեր արիւնով ներկուած,
 Որտեղ թշնամիք ձգած են բանակ:
 Յետ թողած դարեր մի քանի տասնեակ,
 Եղած ես հայոց կեանք ու մխիթարք.
 Դու էիր միակ նախկին ժամանակ,
 Ամենայն հայոց դու մայրաքաղաք:
 Նահատակուեցին քեզի մէջ շատերք.
 Երբ քեզի Գաիրեց ագիկ իշխանն,
 Քո մէջն են պահուում այդ անձանց պատկերք,
 Ու մեր նախահօր Նոյան տապանն:
 Ունէիր դու բերդ հաստ պարխապներով.
 Որտեղ վարժուում էր գորբդ քո ջքնաղ,
 Պատուած էիր դու զօրեղ քաջերով,
 Որոնք թշնամուն կրում էին վախ:

Ո՞ր մնաց քո այդ ցնծալի փառքդ.
 Որն անկասկած վայելում էիր դու,
 Փոխուել է արդէն դժբաղդի վարքդ,
 Ընկած ես գասում մարդկանց ծաղրածու:
 Քար ու քանդ եղած հին քո տներդ,
 Ներկայացնում են տեսարան անեղ.
 Վաղեմի աւեր, քո հաստ պատերդ,
 Կարծես քո ցաւիդ սպասում են դեղ:
 Դու քո ինքնասէր մարդկանցդ շնորհիւ,
 Տուել ես դու վերջ քո հօր կեանքիդ.
 Թշնամիներդ թուով բազմաթիւ,
 Չեն լսում բնաւ քո հառաչանքիդ:
 Քո ներկայ կեանքդ խաւար է մութ.
 Փոխանակ ցաւիդ անելու դարման,
 Սպասումես որ շարժուի վերագ դուք.
 Որն չի լինի մինչի յաւիտեան:
 Բնակիչներդ անքաղաքակիրթ,
 Չբաղում են միշտ գործքով գանազան.
 Ունէին առաջ նորանք բարի սիրտ,
 Ու քաշում էին քո հոգսդ միայն:
 Իւրենց խոր քնից երբ պիտ արթնանան,
 Բնակիչներդ խաաիւ մոլորուած.
 Ե՞րբ պիտի նորանք քո ցաւդ հոգան,
 Ու ծագկեցնեն քեզի ծերացած:
 Երեխաներդ, պատանիներդ,
 Դաստիարակներից մոլորում են միշտ.
 Իսկ քո խելացի գրագէտներդ,
 Չեն լսում բնաւ. քնած են դեռ խիստ:

ԿԱՍՆԱՒՈՐԻ ԱՂԵՐՍՆԵՐ.

Չեւքերս կապած, ոտքերիս շլթայ,
 Մեղքիս համեմատ կրում եմ պատիժ.
 Ունեմ ես վերաս գգեստ մի թաւշեայ,
 Տուէք ինձ պարպեմ լեզուով լիքն շիշ:
 Սուրբ ճանապարհից ես ընդհատուելով,
 Կատակով ասի մդեմ դէպի սա.
 Չար կամեցողիս բարի կարծելով,
 Ես անտանելի այս օրին հասայ:
 Անհամբերութեամբ ընթանում եմ գէմ.
 Դէպի չարչարանք, դէպի խաւար մահ,
 Մտաբերում եմ երբ էի ես վեմ,
 Երբ կրում էի ազատ գէնք զբահ:
 Բանգի խորքում ես պիտ առաջխարեմ.
 Մեղքերս ծանր այնտեղ պիտ քաւեմ,
 Ծանր շլթայքս ես գուրդուրելով,
 Չսեսած անեղ կեանք ես պիտ վարեմ:
 Անցած օրեր... բաբախում էր սիրտս.
 Երբ ինձի տարան հաշտար մատեան,
 Փոխուեց, սպառեց այն ժամուայ դիրքս,
 Երբ ուղեկցում են ինձի գատարան:
 Տիրեց լուսթիւն... եղաւ քննութիւն,
 Արդար սրտիկս բաց էր ու արծակ,
 Անմեղ եմ խիղճս չբառեց ինձ բուն.
 Առջին անգամներ մնացի ես խակ:
 Վերջապէս ինձի մեղօք մտեցին.
 Առարջակեցին. «մեղքերդ գղջա»,
 Երգուեցայ անկեղծ ես սուրբ էջմիածին,
 Որից յետոյ ես կախանորուեցայ:
 Կարգեցին վերաս խսկոյն պահապան,

Որպէս չարագործ գրպարտեալ անձի,
Ոտքերս դրին իսկոյն հաստ շղթան,
Բանդն մերձակայ մեկնեցին ինձի:

Կարծեցին նորանք իրենց իմաստուն,
Անմեղ սրտիկս արին քար ու քանդ,
Մեղաւոր գտան միջում մի փաստում,
Տուին ինձ նորանք անուն «արեստանո»:
Լուռ ու մունջ էի, չէի բողոքում.
Ենթարկեցին երբ դատի անիրաւ,
Իմ կարճիկ յոյս և Աստուծուց չեմ կտրում.
Որ պարզեց ինձ հազիւ արոյժ ցաւ:
Այժմ ես այստեղ կեանք պիտ վայելեմ.
Ու լինեմ նախանձ այլերի աչքին,
Այս մուժ վանդակում պիտ ես տանջուեմ,
Որ տամ ես փոխնորդ իմ համեստ վարքին:



Հ Ա Յ Գ Ր Ա Գ Է Ց .

Արևելք, արևմուտք, հիւսիս ու հարաւ,
Մասնացոյցում են ինձի սար ու քար.
Կուզեն խորտակել ծովի մէջ ծարաւ,
Կուզեն գոլորել դէպի մուժ աշխարհ:
Անխնամ, ախուր, կապոյտ երկինքն,
Կարծես կապել է ինձի հետ դաշն.
Իսկ այս անիծեալ երկրի կեղծ գիրքն,
Տոյց է տալիս ինձ մերձակայնաշն:
Փայլուն աստղերը, նստ լուսնեակը,
Տալիս են յարմար ժամանակ գործիս:
Իսկ այս ցերեկուայ տաք արեկազը,
Խանգարում է ինձ, միջոց չի տալիս:

Փոխուեց ամեն բան, փոխուեց ամեն ինչ,
Փոխեց աշխարհն իւր կեանքն խաղաղ.
Շնորհիւ իւր ներկայ մարդկանցով մասնիչ,
Ստիպուած եմ գոչել ես կրկին աւաղ...
Ճարահատեալ ես, գիշերն պիտ շրջեմ,
Որ լոյսին չը տեսնեմ ես անհուն զգուանք,
Մթնոլորդ կամար պիտ վերաս քաշեմ,
Որը կը լինի ինձ համար գգուանք:
Երկոտանի, մերկ շնչող կենդանիք,
Հրամանաւ Աստուծոյ դիմում են յառաջ.
Թոյլ ու թշուառին հալածում չարիք,
Ու հնձում վաստակն նոցա ձախ ու աջ:
Կեանքիցս անկասկած մտում եմ դժգոհ.
Քննելով փաստերն աշխարհիս ես ծեր,
Ճարասպառ ու թոյլ, գոչում եմ ես սհ...
Բայց բաղդս ներկայ խաղում է կեղծ դեր:
Երանի կը լիներ օր մնացի անկիրթ.
Չը լսեցի այլ ու այլ ես բաղձանք,
Պահէի հոգի ու մի բարի սիրտ.
Որ անյայտ կնձնից մնային այդ տանջանք:
Կը լինեմ ես այն ժամ ուրախ, երջանիկ,
Երբ մարդկութիւնը կը զգայ խիղճ ու զիղճ.
Համակրութիւն կուզեմ անդրանիկ.
Երբ կը յեսնեն նորանք իւրենց կանքը պիղծ:



Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ .

Կը առաջարկեմ ձեզի մի բառ.
Որի լուծելն է քիչ դժուար,
Անդամով է գոյական անուն,

Եթէ վերցնես նորան իսկ բուն:

Եթէ բառից մէկ «ս»էն թողնես,

Ու փոքրիկ «յ» տեղը գրես,

Տարուայ միջում ծանօթ ամիս

Այն ժամանակ դու կը տեսնես:

Բաղկացած է նա հինգ տառից.

Որոնք են կախ երկու վանկից,

Ունի երեք տառ բաղաձայն,

Իսկ ձայնաւոր երկու միայն:

Վերջին յարգի երեք տառն,

Հիւստում է մի վանկից բառն.

Որի միտքն է նշանակում,

Գիւղաքաղաք Հայաստանում:

Եթէճնորան մարմնով վերցնես,

Ուշի ուշով դու քննես,

Նորա նման աշխարհումս

Թուով շատ քիչ դու կը գտնես:

Կանգուն է նա ամառ, ձմեռ,

Մեր նախահայր Աղամիցն դեռ,

Որին դիտել է անհնար,

Եթէ միշտ իսկ այդպէս մնար:

Նորա վերայ խիստ ալևոր,

Հոռութիւն է միշտ, ու ամեն օր,

Նորա ծայրն գոռոզ ու վառ,

Տապակուած է ամպերով խառ:

Տուած եմ անուն ես հանելուկ.

Որի իսկն է ձեզնից գաղտուկ,

Հասարակ է որպէս խնդիր,

Խնդրեմ լուծել սորան ընաիր:



Ե Ր Ա Ձ.

Սիրոյ բոցով ես բորբոքուած,

Աղի արսուճք աչերիս,

Խոր մտքերով ես հաւաքուած,

Նայում էի դէպ հիւսիս:

Գոռոզակերպ որպէս Մասիս,

Ուրախ դէմքով պայծառ շունչ,

Մօտենումէր ինձ սիրելիս,

Ծանր քայքայով, լուռ ու մունջ:

Ժպիտան երսին, ինձ մօտ նստած,

Տեսայ նորան տարաժամ

Անտանելի հայացք ձգած,

Երեսիս իմ անարժան:

Տեսայ նորան ես այդ ժամին,

Ձրոյցով քաղցր հետս զբաղուած.

Որոյ շրթունքնին կախարդային,

Սիրոյ կայծից զարգացած:

Թևերիս մէջ գրկած տեսայ.

Անվրդով նա ննջում էր.

Անհաւատ յոյս դրած ընծայ,


Գրաւուած էին դէպի սէր:

Կը մեղանչեմ, ինձ ներեցէք,

Ափսոս որ այդ մի ժամ էր.

Ափսոսելով խնդրեմ լսէք.

Այդ տեսածս երազ էր:



Ս Է Ր .

Անարգում եմ ես այն օրին,
 Այն ժամին, այն վարկեանին,
 Որ աշխարհիս մէջն խորհին,
 Ընկայ հարգով լալագին:

Այն կէտին որ ընծայում չեմ յոյս,
 Սորանից առաջ տարի չորս,
 Այժմ նրանից տալիս եմ խոյս,
 Որպէս թշուառ վերքով որս:

Ցեցն, սրտիս մէջն անդօրր,
 Կտրատելով անտես, մուկթ.

Լեարգս ու թոքս այրեց բոլոր,
 Մէրն այդ սէրն, սէրն անգուկթ:

Այն օրից, որ եզայ արժան
 Այդ զմայլ սէրին անսովոր,
 Չարչարանքով մնացի դաժան,
 Տարակուսած ես շատ խոր:

Չգած մտքից ամեն մի բան.
 Ամեն մի գործ, կսկծահար

Մոլորուած եմ, անպատուական,
 Ապուշ տխմար, խելագար:

Արտաւազդի շխթաց նման,
 Օրէքստ օր, հետզհետէ

Խայթում ցաւով ըսբուժական,
 Մերկ մարմինս մաշում է:

Երբ ես յոյսով եմ միշտ տեսնում,
 Ընդունում սէրս դեզանի,

Այն վայրկեանին յետ է ստացում,
 Առաողջ շանքս ծիրանի:

Կեանքս քնքուշ, ու ժրաջան,

Ունէր սլացք դեղունակ,
 Բայց ուժն այդ էլ է քտրական,
 Ընդունեց ինձ հակառակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆ ՈՒ ՕՐԻՈՐԴՆ .

Երիտասարդ
 Օրիորդներն հերթում իւրենց,

Աշխարհումս այս ամեն,
 Ամեն կողմից տղայ սեսից,
 Յածր յարկի են հաշուին:

Օրիորդ
 Ոչ, ներեցէք. ընդհակառակ.

Օրիորդներն աշխարհում,
 Պատուի կողմից միշտ շարունակ,
 Առջին տեղն են ըմբռնում:

Երիտասարդ
 Ծնուած օրից համար ծնողաց,
 Խիզախ, անմիտ են կոչում.

Բարեկամք սրտով միշտ բաց,
 Փուշն լիքնից են շոկում:

Օրիորդ
 Այդ տղան է որն մեծացած,

Շոպյութեան է դիմում,
 Իսկ օրիորդ թեպէտ ծերցած,

Այդ պաշտօնին չէ հասնում:

Երիտասարդ
 Ծնուած օրից հօրն ու մօրը,

Մեծ վրաս է պատճառում.
 Միևնոյն նաև իւր եղբօրը,

Ատու՛մ է խիստ, նախանձու՛մ:

Օրիորդ

Այդ տղան է, որ մշտեկան,

Պատճառներով զանազան,

Կեղծ խօսքերով բարոյեական,

Թալանում է ամեն բան:

Երիտասարդ

Անդադար նա ծծուկի պէս,

Հօրն ու մօրն է ծծում.

Վնասից բացի նա խսկապէս,

Օգուտ բնաւ չէ բերում:

Օրիորդ

Հայրն դրանից չունի մի վախ.

Նա դորանով է ուրախ:

Բայց կան տղայք որոնք խարդախ,

Մոգոնում են այդպէս խաղ:

Երիտասարդ

Գրդաստանում նա շատ քաղցրէ.

Ունի բուրմունք միշտ դալար,

Վերջն ի վերջոյ բայց նա ցածր է,

Գնահատում հօր համար:

Օրիորդ

Ոչ. օրիորդն ծաղիկն է սան.

Տալիս է նա մեծ օգուտ,

Թէ գործերով անտեսական,

Եւ թէ գործքով գիտնական:

Երիտասարդ

Ծնողներն պահպանում են,

Հասցնում են փափագին.

Բայց նրանք յետոյ բաժանում են,

Որպէս հեան սոխակին:

Օրիորդ

Ո՛վ պատանի. դուք բարի էք.

Բայց ունէք միտք դուք խիստ խակ,

Ո՛վ է, տեսնեմ, խնդրեմ ասէք,

Եղել ձեզի հեղինակ:

Երիտասարդ

Օրիորդներին երբ կնութեան,

Ծնողքն են վիճակում,

Ազգանունն մինչի անդամ,

Ջնջում են, միշտ փոխարկում:

Օրիորդ

Հսէք տղայ, պարզն ասեմ ձեզ.

Այդ էջերն չունեն փաստ,

Ձեր բուժ միաքն առանձնապէս,

Կրկնում եմ շատ է հասա:

Օրիորդ բառն ինքն ինքեան,

Դուրեկան է, պատուական,

Կրպատւի նորան անկիրթ թուրքեան,

Այլազգիք ու Եւրոպան:

Ամենայն մի երիտասարդ,

Ունի սրտումն բան խակ.

Ծծում է որն որպէս մի սարդ.

Որի միաքն պիտ գիտնաք:

Պատճառաւ մի շքեղ օրիորդի,

Որից որ դուք խիստ չէք գոհ,

Տղայք լինում են նման հորդի,

Անմեղ կերպով ինքնազոհ:

Թէ բարեսիրտ, թէ չարեսիրտ,

Ամենայն մի պատանի,

Գցած օրիորդում հայացք մի ճիշտ,

Սէրն զգացած պիտասանի:

Երիտասարդ

ՂԱՄ... օրիորդ այդ խօսքերն,
Արսատ զցին սրտիս մէջ.
Իէպի խորքն են նորա ծիլերն,
Արտիս մէջն անուժ էջ:

Այդ իրաւ է, որ գրաւում է,
Պատանիքոնցս դէպի սէր.
Մութ զգացմունքն մեզ մաշում է,
Որպէս սուրն մահաբեր:

Մնաք բարեաւ դուք սիրելիս,
Ինձ յաղթեցիք սորա մէջ,
Թող վկայ լինի մեծն Մասիս,
Որ չանենք մենք ոչ մի վէճ:



ՍԻՐՏԻՍ ԾՐԱՎԻՐՆ.

Ունենալով աչքի առջև,
Կեանքս մարդկանց կրտսեր,
Ծրագիրն կուզեմ սրտիս թեթև,
Մայտնել մարդկանց անվեհեր:

Մարդկանց շարժուող ու կենդանի,
Որոնք են այժմ բազմաթիւ,
Կուզենամ որ նրանց արժանի,
Լինի միայն մի պատիւ:

Կուզեմ մարդիք որ տակաւին,
Զրկրեն բնաւ ոչ մի վախ.
Հիմայ ու միշտ գործեն բարին,
Հովուելով համերաշխ:

Զեմ ուզում ես լինել կապուած,
Որպէս ստոր կալանոր.

Այլ ուզում եմ արձակ ու բաց,
Ապել քնքոյշ բաղդաւոր:

Կուզեմ մէջն ընդհանրատան,
Հաւասար ես գոչել ձայն,
Հեան մարդկանց բարձրատիճան,
Եւ թէ հեան փոքրատան:

Սաղաղութիւնն Աստուածային,
Կուզեմ լինի ամեն տեղ:
Թէ մէջն ազգաց այլերկրային,
Եւ թէ մարդկանց այլացեղ:

Ինչպէս մարդիկ հիւս, միաբան,
Ունեն հոգի ու մի սերտ,
Կուզեմ այնպէս լինին արժան,
Դատաստանի արդար ճիշտ:

Կուզեմ մարդիկ կրեն հաճոյք,
Լինեն նաև շնորհագէտ,
Ու բոցավառ որպէս խարոյկ
Սրտով ազգին օգտաւէտ:

Կրթութիւնն համասէր,
Թող տարածուի երկրիս մէջ.
Թէ մէջն մարդկանց ժլատ զանձատէր,
Եթէ մարդկանց թշուառ խեղճ:

Իմ մայրենի կուզեմ լեզուն,
Արտասանուի պարզօրէն.
Կարկաշանոս նրա բառերուն,
Զընդիմանի ոչ մի քէն:

Կուզեմ որ մարդ իւր սեփական,
Լինի հաստատ հաւատին,
Ու գոհուելով լինի պաշտպան,
Հայրենիքին, կրօնին:



Ք Ա Գ Ո Ւ Ի Ի Ա Ղ Է Տ Ը

(6—9 փետրուարի 1905 թ.).

Վարչութիւնը Ռուսիայի մէջ խանդարուեց.
 Նորա սեղը ըէակցիան կանգ առեց,
 Աշխատելով օրեր, ամիսք, տարիք շատ,
 Գցեց երկրիս մէջ նա կայտառ մի արմատ,
 Հետզհետէ սեղի ուժից նա ծլեց.
 Եւ շատ չանցաւ երբ գոյնզգոյն նա ծաղկեց,
 Ծաղկեց թէ չէ այդ արմատն անվեհեր,
 Տուեց մեզի արիւնաւէտ պտուղներ:

Պտուղներն այդ սոսկալի ախիրակի,
 Նախ կովկասում տուին իրենց համն խակ.
 Խաղաղագոյն, հանգիստ քաղաքում Բաքու,
 Աղէտ եղաւ սարսափելի, անարկու:

Մեր դարևոր հարևանն դժբաղդ մերձ,
 Կարծեց ինքն կը լինի իշխող, կը մնայ գերձ,
 Լսելով չար խորհուրդների բեղնաւոր,
 Գտաւ իրեն մի ցաւ անբոյժ, հրատչոր:

Թերազգոն, թուրք խուժանն կամաման,
 Նախանկատ, լինել հայից մեծաշահ,
 Խաբուսիկից խաբուած նա խտտորագոյն,
 Գրոն տուեց հայի վերայ խաղաղուն:

Փետրուարի վեցին, հազար ինն հարիւր
 Հինգ թուին, թուրքն քաշեց հայի վերան սուր.
 Այգալիսի անձերն տաժանագոյն, բարբարոս,
 Բաբուն դարձրին անհերքելի տարտարոս:

Կազմակերպած խմբեր ձեռքով փորձուած,
 Ու գոգուած «Ալու» անուամբ սրբազգեաց,
 Մրի անցրին աչքի ընկող հայերին,
 Ու նրանց կայքն մասնեցին ձօխ հրդեհին:

Արշաւեցին դէպի խանութներն հարուստ.
 Ու հայերին պատճառեցին մեծ կորուստ,
 Թալանեցին նոցա կահ ու կարասին,
 Ու մըջիւնի պէս կրեցին միասին:

Կարգադրուած են խմբերը զիտուն շատ.
 Ու գործում են իրենց պատուէրն անվատ,
 Թախտոգ խմբերն ջոկ են կազմուած համախոն,
 Չոկ են խմբին նաև սպանող ու այրող:

Ձեռներումն բռնած ձիւթի կուժն անվախ,
 Վազվզում են այս ու այն կողմ որպէս խաղ.
 Ձիւթակոծում են տներն հայի շէն,
 Ու կրակում. լորս խտտագոյն, արտորէն:

Ձինուած զենքով Եւրոպական լաւագոյն,
 Ու համոզուած լիտի մարդկանցից կորին,
 Անչափակալ, գաղանաբար, անխնայ,
 Հուր թափեցին դժբաղդ Հայերի վրայ:

Անմեղադիր տաք արիւն հոսում էր.
 Ու կարծես թէ տխրամոմուռ խօսում էր,
 Հոսում էր ու համակեցի իւր թշուառ,
 Միրան յուզում տոչորուած ու բոցավառ:

Երևեցան այդ օրն հայերն շատ թոյլ,
 Ու մի միջոց ընդդէմ չառին եղան ծոյլ,
 Աշխատեցին կարելին չափ տալ փախուստ,
 Կապելով յոյս վարչութեանը զուր կորուստ:

Հեռախօսով քաղաքի չորս կողմանէն,
 Հաղորդակցել սկսեցին շուտօրէն.
 Խնդրուելով վարչութեանը տխրալի,
 Շուտ վերջ գնել այդ արիւնին ցաւալի:

Վարչութիւնը այդ իսկ ժամին քնած չէր,
 Նա ջերմեռանդ ու անդադար գործում էր,
 Նախանկատ ծրագիրներ ոչ անգիրձ,

Կատարում էր. սակայն անխիղճ, շատ անխիղճ:

Նահանգապետին գիմեցին բարերարք.

Ու խնդրեցին վերականգնեցնել կարգ:

Բայց ասեցին իրենց կեանքն ներկայ դառ,

Ու թուրք գազանների արարքն անճառ:

Նակաշիգձէն հրաժարուեց տալ օգնութիւն.

Պատճառաւ որ չունի նա բաւ գօրութիւն,

Շատ խնդրեցին, աղաչեցին դառնագոյն,

Բայց բնաւ չըագղեց այդ մարդու սրտին անբուն

Օրը մի՞նեց. բարբարոսներն այդ թուրք,

Մութ խաւարում թողին հայերին խեղճ, գուրկ,

Թալանեցին, կողոպտեցին անսասման,

Ձրտեսնելով մի տեղ իրենց ընդիման:

Երկրորդ օրն թուրքերն այդ մեծ ուժով

Շարժուեցին դէպ հայի թաղերն գուժով:

Բայց օրն այդ չեղաւ դորանց բաղդաբեր,

Ու հասկացան որ խաղում են շատ կէջ դեր:

Առջին օրուայ, սկսեցին, պէս թախել.

Ու հայերի կեանքն նաև չը խնայել,

Սակայն պաշտպանուեցին հայերն մէկ-մէկ,

Գոյրելով բանի գազանների շէկ:

Վարչութիւնը մնաց լոկ հանդիսատես.

Եւ հայերը տեսնելով մեր հեռատես,

Ինքնապաշտպանութեան կազմեցին խմբեր,

Ու թուրք զխակներէց հիւսեցին թմբեր:

Անմաագոյն, թուրքերն վերոյիշեալ,

Այդ մի գարկէց սկսեցին յետ դառնալ:

Ուրախացան երբ հայերն այդ տեսան.

Անգոհ սրտով իւրենց աներն դարձան:

Եւ կարծելով որ թուրքերին զսպեց այդ,

Ձինթափուեցին, հանգստացան բազմամարդ,

Հանգստացան. բայց այդ երկար չըսեց,

Եւ թուրք տարրին կրկին շարն բեկուից:

Մի ժամ շանցաւ, երբ թուրքերն ուժով մեծ,

Յաղթանակի վերա դրած հաւատ կեղծ,

Կատաղաբար տուին հայերու վերան.

Սկսելով հրդեհ, կոտորում, թալան:

Ահարկու էր կազմուած ուժն թուրքերի.

Ու հայերու համար կիրճն խորքերի,

Չարավերագների աշակցութեամբ լիրբ,

Դէպի հայերի ընթացին կապած դիրք:

Կրկին սկսեցին կողոպտել, կոտորել.

Կրկին աներն հրդեհի ենթարկել,

Կրկին ոգևորուած թշնամուց շար, գուտ,

Մղեցին դէպ իրենց գերն անօգուտ:

Բաքուն ցոյցում էր սոսկալի տեսարան.

Նա այրում էր. և այրում էր աննման,

Ծուխի խառն քուլաներն սևակիկ,

Ոլոր մոլոր բարձրանում են դէպ երկինք:

Բաքուն դարձաւ միջազգային կոուլի վայր.

Այնտեղ մնացին աղերսագոյ շատ հայր, մայր,

Եղաւ աշխարհիս մէջ նա պարզ օրինակ,

Դառնալով անմեղ արիւնի հեղինակ:

Այդ օրն էլ նորանք վերև վերցրեցին.

Քանի հայունու բռնաբարեցին,

Ու շատ հայերի նրանք տարան գերի,

Մշակելով իւրենց մութ յոյան թերի:

Այդ օրն էլ մի՞նեց, բայց վարչութիւնը,

Չէր ուզում պղծել իւր սրբութիւնը,

Նախապինդ իրեն մշակուած դատը,

Գործում էր աւել քան իւր մօր կաթը:

Երրորդ օրն թուրքերն կրկին անվախ,

Ինչպէս երկրում անդատատան ու անկախ,
Գոռոզամիտ վրայ հասան հարաւից,
Կարծես ապահովուած լինէին դատից:

Իրենց հերթում հայերն էլ չը քնեցին,
Ու վարչութեան վրայ էլ յոյս չը կապեցին,
Համբերութեան նոցա բաժակը լցուեց,
Ու պաշապանուել հայերին նա ստիպեց:

Կապուեց թշնամիների մէջ տաք կուր.
Պատերազմի էր նմանում դալ բիւ,
Զրծախեցին հայերն-կեանքը աժան.

Թողեցին թուրքերից շատերին դաժան,
Կռում էին միմիանց հետ գովելի.

Զիմանալով դորա պատճառն թովելի,
Վերջնսի վերջոյ թուրքերն յաղթուեցին,
Ու հայերին շատ զոհ նրանք տուեցին,

Այսօր տեսաւ Նակաշիդձէն տխրերանդ,
Արգարութեան վերայ առեց իսկոյն կանդ,
Գտնելով զօրք բաւականի հրաւիրեց,
Ու հայերին գերակշիռ նա գտպեց:

Նակաշիդձի չարենպաստ կամբին զոհ,
Եղան հարիւրաւոր անմեղ մարդիկ զոհ,
Կշտացաւ, նա սարսափին վերջ դնելով,
Երեք օրուայ հոսող տաք տաք արիւնով:



ՍՈՒԹԱՆԻ ԿԵԱՆՔԸ ¹⁾.

Պահելու, իւր, «Ելզըզ քեօջբում ²⁾»,

¹⁾ Քաղուածք ընտր գար» թերթից 1903 թիւ.

²⁾ Սուլթանի պալատականների թիկնապահների հաւատարիմ մարդկանց բնակուած տեղն է:

Սուլթանն կեանքն ապահով,
Այլ ու այլ, պէս, պէս դէպքերում,
Հետեւեալ կեանքն է վարում:

Առաւօտեան ժամը չորսից,
Նա խոր քնից է զարթնում.
Վեր կենալով նա անկողնից,
«Անարթին» վրան ձգում:

Ոտնամաններն հագնելով,
«Ալահին» է նամազ անում:
Մետաքսեայ ֆէսը դնելով,
Դէպ լողարանն է գնում:

Այնտեղից սուլթանն անցնում է,
Իւր սենեակն լուռ ու մունջ,
Որտեղ անուշ նա խմում է,
Երկու բաժակ Տաճկաց սուրջ:

Դրանից է նա յետոյ ծխում,
Առջին մի հատ գլանակ.
Որից յետոյ չի բաժանում,
Ամբողջ օրը ցուրտ ու տաք:

Նախաճաշից յետոյ թեթև,
Սկսում է ընթերցել,
Շատ զանազան դոկումենտներ,
Ու գնով արժէթղթեր:

Սուլթանն է միշտ նախաճաշում,
Ժամը մօտիկ տասներորդին.
Որից յետոյ է ընդունում,
Մեծ քարտուղար «Տաշիր-Բէյին»

Դրանից յետոյ է զբաղում,
Գործերով կայսերական,
Մինստրութեանն է յայտնում,
Հրամանքն արքայական:

Մինատրներին Սուլթանը,
 Յաճախ է մօտ ընդունում.
 Մինչ ուշ գիշեր քարտուղարքն,
 Հրամաններն են կատարում:
 Աբդուլ-Համիդն շատ աշխատասէր է
 Ազատաժամ չունի երբէք մի բոպէ
 Ճաշից յետոյ նա քնում է երկու ժամ
 Վեր կենալով պարապում է տարածամ
 Իրանից յետոյ չի ունենում,
 Անհրաժեշտ գործք հլու:
 Շքեղ պարտեզն է գնում,
 Առողջ, թարմ, օդ ծծելու:
 Արքայի առջից գնում է,
 Մեծ «Մուհլատ-Հասան-փաշան».
 Որն Սուլթանից ստացել է,
 Հաւատարմութեան նշան:
 Մուհլատ հասան-փաշայի,
 Պարտքն այն է իրաւի,
 Որ մարդկանց նա հեռցնի,
 Ով արքային պատահի:
 Մշտեկան խմում էր փունջ,
 Միրում էր և խմել սուրճ,
 Իսկ այժմ նորա ցանկութիւնն,
 Այդ է նետաձգութիւնն:
 Նա բանում է նշան շատ
 Քսան հինգ քայլի վերայ
 Տախտակի խփում է հատ
 Անունն է որտէղ նրա:
 Օգում ձգուած նարնջի,
 Հեռաւորութեան որի,
 Առանց նշան բռնելու,

Խփում է նա մէջն օդի:
 Գնում է ազատ ժամանակ,
 Հարեմն գանուոյ իւր մօտ.
 Որտեղ խմում է մի բաժակ,
 Տաճկաց «բախի» անուշիտ:
 Նաև այնտեղ նա լսում է,
 Արեւելեան շատ երգեր.
 Եւրոպական քաղցր տաղեր,
 Մեղամաղձոտ մեղոգեաներ:
 Եւ ամենից նա յաճախ,
 Արհեստանոց է գնում.
 Գործերով նա Օորպէս խաղ,
 Միշտ այնտեղ է զբաղում.
 Ժամացոյցներ հին սարքերով,
 Ու անօթներ շատ շինելով,
 Լաւ նկարներ նկարելով,
 Եւ այլ ուրիշ գործերով:
 Ճաշում է միշտ նա ամառը
 Ժամը սովորբար վեցին.
 Իսկ ճաշում է նա ձմեռը
 Ժամը մշտեկան չորսին:
 Սպասաւորը բերելով,
 Ժամը չորսին ճաշի ժամին
 Առարկայ մի ծածկած գորգով,
 Գնում է առաջ Սուլթանին:
 Իրանից յետոյ է ներս մտնում,
 Հաւատարիմ խոհարարը.
 Որը Սուլթանին է բերում,
 Նորա սիրած կերակուրը:
 Մշտեկան ծածկուած է լինում,
 Մեատքսեայ սև նա ծածկոցով.

Որի ծայրում կապուած է ընում,
Կնիքը «կելարջու» դրոշմով:

Յետոյ ծառան է մանում,
Չամբիւղն հացի առած.
Յետոյ սպասաւորն է բերում,
Ջրամանը դրոշմուած:

Ճաշից յետոյ Սուլթանի,
Հանդիսաւոր ժամում մուտքի,
Բոլոր մարդիք ճանապարհի,
Երկրպագութիւն են տալիս:

Նա շատ սակաւ է ուտում,
Մի կեր է միշտ ընդունում,
Նրա ճաշերը սենեակում,
Մի քանի բոպէ է տեսում:

Կերակրից նորա վայել
Փլաւն է միշտ տարածուած
Բայց ամենից շատ առաւել
Գործում է ձուն անկասկած:

Չընայելով այս աստիճան,
Կերակուրի զգուշութեան,
Սուլթանին վեր բերելով,
Տանջւում է փոր ցաւով:

Պատճառով այդ նպատակի,
Թոյլ է տալիս օրեկան մի,
Հակառակն ընդ օրէնքի,
Խմել մի մի շամպայն գինի:

Խոհանոցի պահուածիւնն,
Յանձնուած է Ելզըզբեօջի,
Պաշտօնարար Օսման Բէյին,
Որն է «կելարջի բաշի»:

II.

Ճաշից յետոյ պալատում,
Սուլթան վէպեր է կարդում,
Իսկ երբ ծիծաղ է ուզում,
Ծաղրածուին է կանչում:

Նա այն ժամ է ուրախանում.
Երբ լինում է թատրոնում,
Յիրկերում, կոնցերտներում,
Եւ այլ ուրիշ փորձերում:

Նա խմբեր երկու ունի.
Որոնք են լաւ արտիստներ:
Որոնք մարդկանց մէջ բիւրի,
Կատարում են լաւ դերեր:

Մէկ խումբն է Տաճիկներից,
Կոմեդեաների համար.
Իսկ միւս խումբը Եւրոպայից,
Համար օպերայի շար:

Պօլիս եկող արտիստներին
Պալատ են միշտ հրաւիրում
Որոնք սուաջն մեծերուն
Իրենց զիտցածն են ցոյցում.

Գահլիճում տիրում է լուսթիւն.
Որպէս չընի կենդանութիւն,
Չի լաւում և խօսակցութիւն,
Ու այլ ուրիշ ճայնարկութիւն:

Սուլթանն չէ երևում.
Նա որևէ մի տեղում,
Բազմաթողի մէջ խրւում,
Ու այնտեղից է նայում:
Վարագոյրն է երբ իջնում,
Այդ ժամանակ վրայ բեմին,

Մի արտիստ է երևում,
 Ու յանձնւում իւր զերին:
 Այդ անձերըն իսկապէս,
 Լինում են արքայազուններ.
 Եւ կամ գեղեցիկ պէս, պէս,
 Կանայք արքայազուհիներ:
 Ժամանակն ներկայացման,
 Պատահում է հրաւիրում են,
 Դեսպաններին այս ու այն,
 Որն համախոհման նշան:
 Տաճկաց մամուլին խստութեամբ,
 Արգելուած է բռնութեամբ,
 Ներկայացումն դահլիճում,
 Հրատարակել լրագրներում:
 Սուլթանն շատ է սիրում,
 Օպերներից առանձնապէս,
 Որոնցից է միշտ հաւանում,
 «Տրուբատուրն» իսկապէս:
 Օտարոտի խումբ միանգամ,
 Այդ բեմում փորձ էր անում մի,
 Ժամանակին գործողութեան,
 Մարշն խնդրուեց «Համիդէի»:
 Երաժշտեա «Գուսափ Փաշան»,
 Օրկեստրն էր զեկաւարում,
 Կայսերական դահլիճում,
 Հանդիսաւոր ձայն լսում:
 Օրկեստրը երբ նուագեց,
 Բեմի վերայ իսկէջն, յանկարծ,
 Որն ծիծաղ յառաջ բերեց,
 Սպիտակ մի էշ երևաց:
 Պատճառաւ անզգուշութեան,

Մեծն արքայի հրամանաւ,
 Երաժշտապետ Գուսափ փաշան,
 Պաշտօնից իւր զրկուեցաւ:
 Մի անգամ կայսերական
 Բեմի, Ֆոկուսնիկ, վրայ մի,
 Ճարպիկութիւնն զիտնական.
 Սուլթանին էր ցոյց տալի:
 Նմանեցնում էր զանագան,
 Թագաւորի Եւրոպական,
 Օրինակով «Վիլհելմ» կայսրին,
 Աւստրիայի «Փրանց-Յովսէփին»:
 Ֆոկուսնիկը երբ հրաւիրուեց,
 «Արիֆ-Բէգին» երևոյթի.
 Այնտեղ նորան լաւ յաջողուեց,
 Դէմքն նկարել Սուլթանի:
 Երբ որ Սուլթանն այս լսեց,
 Վերջ տալ սորան հրամայեց.
 Ու մի գումար տալուց յետոյ,
 Ֆոկուսնիկին հեռացրեց:
 Սուլթանն միշտ ուշ է քնում.
 Նա քնից է վախենում,
 Մթութիւնը նրա վերայ,
 Խիստ սարսափ է տարածում:
 Սենեակի լուծիւնից,
 Շատ է նաև վախենում,
 Օրկեստրը զիշերուանից,
 Մինչի լոյս է նուագում:
 Սուլթանն ննջարանում,
 Երբ քնելու է պառկում,
 Քնարանի ամուր զուռն,
 Իրեն ձեռքով է փակում:

Քնելուց առաջ Սուլթանի,
«Իզմիր-Բէյը» նրա բարեկամ,
Կարգում է դէմն արքայի,
Որևիցէ ազօթք մի բան:
Աբդուլ-Համդին ծառայում է,
«Իզմիր-Բէյը» որպէս թարգման.
Որն նաև իմանում է,
Շատ լեզուներ կանազան:
Աբդուլ-Համիդն ստանում է,
Լրագիրներ զանազան.
Փրանսիայէն, Ռուսիայէն,
Եւ այլ ուրիշ երկրերէն:
Սուլթանն նաև սիրում է,
Կարգալ զանազան վէպէր,
Առհասարակ նա սիրում է,
Կարգալ ասպտամբուլթիւններ:
Մեծ Սուլթանն մի անգամ
Գրապետին պատուիրեց
Երկու մեծ վէպ գրել խամ
Բայցոյդ համար մարդկանց:
Ինչպէս վէպի անունը,
«Առաջնորդ սուլթանաց»,
Նոյնպէս բովանդակութիւնը,
Սուլթանին էր պատկանած:
Սուլթան իւր սենեակում,
Գիշերն է երբ արթնանում.
Իրիմ միայնակ զանելով,
Վրան սարսափ է ազդում:
Երբեմն մօտն է հրաւիրում,
Հուստարիմ անձերին.
Գուցէ մի կերպ զրոյցում,

Վերջ տան սրտի կայծերին:
Երբ արքան կածկածայոյս,
Երազից է արթնանում.
Իսկոյն կանչ է նա տալիս,
Բազդինդիր կախարդներուն:
Բացատրում է որոնց,
Երազն իւր անհանգիստ.
Որն ի միջի այլոց,
Չի տալիս նորան հանգիստ:
Սուլթանն երբ տկարնում է,
Բժիշկներուն է դիմում.
Թեթև հիւանդութեան ժամին,
Իրեն ինքն է բժշկում:
Հաւատքէր նա ընձայում,
Յայանի բժշկապետին,
Հուշակապետ «Մովրոյենին»,
Որն բժշկում էր Սուլթանին:
Աչքից ընկաւ այն օրից,
Մովրոյինի փաշան կայսրի,
Երբ Պօլիսում նա գրեց,
Պատմութիւնը Ելլըզ-Քեօշքի:

Ահա այսպէս է Աբդուլ համիտն,
Իւր օրերն անցանում.
Մայրաքաղաք Պօլիսում,
Ու գեղեցիկ Ելլըզ-Քեօշքում:

ՍՈՒԹԱՆԻ ՓԱՌԲԸ.

Աբղուլ-Համիրն ներկայում,
 Անկասկած շատ ծերացել է.
 Մարմինն ու գգայարանքը,
 Անմիջապէս թոյլացել է:
 Սուլթանն քանի անգամ,
 Հնարաւոր գործ զրեց,
 Ընգէմ գերնալու պատգամ,
 Որն նրան չը յաճողեց:
 Տուեց նաև թողութիւն,
 Զանազան հնարքներ գործել.
 Որք ունենք կարողութիւն,
 Նիհարնալուն նպաստել:
 Օրինակի համար նա,
 Տաք ջրով չի լողանում.
 Զնայած սովորութեան նրա,
 Զանազան դեղ չի ընդունում:
 Մի անգամ մի գնչուհի,
 Որն էր արքայագուհի,
 Գուշակելով դէպ արքան,
 Յայտնեց կեանքի սպառնալի:
 Արքայագուն ժամանակներ,
 Երբ յայտնեց գահ ելնելը.
 Բազմն նորա վայել, ընտիր,
 Եւ եղելիք պատերազմը:
 Գնչուհին գուշակեց նաև,
 Մեծ արքայի մահուանից.
 Որն որ կուգայ բարև,
 Արտաքին դաժան ցաւից:

Սկսուած իսկ այդ օրից,
 Վախենում է ամենից,
 Թէ խողերից ու ժանդախտից,
 Եւ թէ ուրիշ ցաւերից:
 Սուլթանն ամենայն իր,
 Լուալ է սալիս ամեն օր.
 Շքեղագարդ պալատում իր,
 Անկիւնք, սիւներն բոլոր:
 Գոկումենաներն, թղթերն,
 Լինում են միշտ անպայման,
 Որոնք արւում է արքային,
 Խիստ կատարեալ ախտահան:
 Ախտահանութեան բծերից,
 Քարտուղարը խրանում,
 Անցածն կայսրի ձեռքից,
 Նշմարում է թերթերից:
 Սուլթանն սիրում է ճիշտ,
 Հագնել զգեստներ գոյն, գոյն.
 Որով զարդարում է միշտ,
 Շքեղագոյն դարչնագոյն:
 Սիրում է հագնել միակ,
 Կարճիկ անդրավարտիկներ,
 Աստառով մորթեայ բաճկոնակ,
 Ու թաւիչեայ զգեստներ:
 Նրա սովոր պալատական,
 Հագուստն է սովրական,
 Բաճկոնակ չլիք նման,
 Ու Տաճկական լայն «խրկան»:
 «Սելամըքի» ի ժամանակ,
 Պղնձեայ կոճակներով,
 Կրում է հասարակ վերմակ,

Մետաքսաթեղ զարդերով:

Տակից նա միշտ վերմակի,

Որն է նորա համար հեշտ

Կրում է պողպատեայ մի,

Բարակ գոյքով զրահագգեստ:

Երբէք նա թոյլ չի տալի.

Իւր անձնական դերձակին:

Որն որ մօտ չի գալի,

Պալատում եղած ժամին:

Երբ դերձակն աննման,

Զգեստներ է նոր կարում,

Հեռուից է նա սնպայման,

Զափ ու ձեն վերցնում:

Դերձակապեան գլխաւոր,

Այս խօսքերն ասաց մի օր.

Լիազօրին կառավարչին,

Ու կենսագիր հեղինակին:

«Մի անգամ պալատ ես հանգիստ մտայ,

Ու «Իզմիր-Բէյին» ¹⁾ ես այնտեղ գտայ.

Որն «Ստանբուլին» ձեռքիցս առաւ,

Ու հարեան մուտքն սարաւ

Սպասելով քանի ըոպէ,

Բացուեց դուռն ճնորից մուտքի,

Որտեղից սրբան զրեթէ,

Ելաւ մէջն ստամբուլի-ի:

Բոլոր սենեակն նա անցաւ,

Միկնոյն գծով ու յետ դառձաւ.

Երկու ըոպէ նա կանգ առաւ,

Ու շտապելով ներս մտաւ

Ահա այսպէս վերջացաւ

Ստամբուլի-ի փորձն

¹⁾ Պալատի ընդհանուր կառավարիչը.

Որն էր ինձ համար ցաւ

Թէ չը յաջողեր գործն:

Իհարկէ! դուբէլեք հասկանում,

Որ այսպիսի պայմաններում,

Ուղիղ զգեստ պատրաստէն,

Այդ չէ իսողալիք խողալն:

Աբգուլ-Համիդն Պօլիսում,

Յաջախութեամբ չէ շրջում.

Այդ դէպքն է նրա հետ լինում,

Մի անգամ տարուայ միջում:

Այդ լինում է Ռամասան ¹⁾,

Ամսոյ տասնուհինգի նման.

Մահամետի վերարկուի,

Հանդէսի երկրպագման:

Հանդէսը չը կատարած,

Քանի որ նրանից առաջ,

Ընդունելու նրան վայել,

Պատրաստուում են առաւել:

Ճանապարհներ այն լայն,

Որտեղ պիտ անցնի Սուլթան,

Խստագոյն հսկողութեամբ,

Ենթարկուում են քննութեան:

Մինչի անգամ մեծ կտոքերը,

Զրերի խողովակները,

Լուսութեան ճանապարհները,

Ու ուրիշ լայն անցքերը:

Գնացած ճանապարհով,

Երկու կողմում կանոնաւոր,

Զինուորներն դիրք բռնած,

Կարծես պատ լինին սառած:

¹⁾ Դեկտեմբեր.

Ուղղուամ է գէպ մզկիթ,
 Մշտեկան բաց նա կառքով.
 Վաանդի ժամին որ խիստ,
 Կեանքն փրկի թուչելով:
 Աբղուլ-Համիդի կողքին,
 Նստում է սիրած որդին.
 Որին որ միշտ կը կոչեն,
 «Էֆենդի-Բուրխան-Էդլին»:
 Մի մարդի եթէ կառքին,
 Յաջող եղաւ մօտենալ.
 Այն մարդու նոյն ըսպէին,
 Յեաքն էլ չի երեւլ:
 Մի անգամ ճանապարհին,
 Պատահեց նորան մի գէպք.
 Որն է սորանից շատ հին,
 Բայց չէր եղած դա երբէք:
 Մզկիթ գնալու ժամին,
 Կառքի մէջն անկասկած,
 Մօան նորա ոսներին,
 Առարկայ ընկաւ յանկարծ:
 Թիկնապահներն իւր խումբ,
 Կարծեցին որ այդ է ումբ.
 Բայց շատ զգուշ քննելով,
 Երեխայ գտան լալով:
 Կապոցում գտան նամակ.
 Հեղինակն էր յայտնում,
 Որ երեխան չոր, ցամաք,
 Արքային է յանձնում:
 Սուլթանն անկոչ ընձայից,
 Անմիջապէս գոհ մնաց.
 Որն իւր գաստիարակից,

Ներկայումս է լաւ կրթուած:
 Շքեղ ու մեծ մզկիթում,
 Փառօք հանդէս է լինում.
 Վերարկուի ծածկոցը,
 Սուլթանն է միշտ բացում:
 Այստեղ հանդէսի ժամին,
 Հոգևոր պետ Շէյխ-Խալամը,
 Ընթերցում է ժողովին,
 Մահամեդի Ղուրածը:
 Յետոյ գնում են մէկ, մէկ,
 Սուլթանի առջից պատուական.
 Կարմրամօրուք նաև շէկ, շէկ,
 Հոգևորներ բարձրաստիճան:
 Նա նորանց միշտ նուիրում է,
 Մի մի նախշած թաշկինակ.
 Որի վերայ նկարած է,
 Սուրբ կրօնից ընդունուածք:
 Հանդէսից յետոյ Սուլթան,
 Թիկնապահոց անձնական,
 Բաժանում է նա նշան,
 Թանգ նուէրներ պատուական:
 Նա մօտաւոր երեկուան,
 Ելլըզ-քեօշքն է դառնում.
 Որտեղ դիմում են նորան,
 Մինիստրներն կարգում:
 Աբղուլ-Համիդի հրամանով,
 Պալտի կողքին շինուած է
 Մի մեծ մզկիթ շքեղ զարդով.
 Որն կոչուած է «Համիդի»:
 Վախենալով արքան խիստ,
 Շինել տուեց այդպէսը.

Որտեղ կատարուում է միշտ,
 «Սելամբի» հանդէսը:
 Մզկիթի մէջ դէմ ու դէմ,
 Բացուում է ընդարձակ բեմ.
 Որի մէջ ամեն ուրբաթ,
 Հաւաքուում են մարդիկ շատ:
 Մզկիթում լայն, դէպի բեմ,
 Պաւիլոններ են ընդէմ,
 Ժողովը որի միջին,
 Ներկայ է միշտ հանդէսին:
 Ժամը տասին առաւօտեան,
 Հռչակաւոր երաժշտական,
 Խառն խումբն զինւորական
 Նուագում է մերթ մեծատան:
 «Համիդի» մզկիթի առաջ,
 Շնորքի են միայն շարուած,
 Քսնակութեամբ մեծ հիւսուած,
 Զինւորներն կարգով կանգնած:
 Բեմի մուտքում բարձրաստիճան,
 Կայսրի անձին պահպանութեան,
 Հսկում է գունդն «Տրիտոլիան»
 Ու շքեղ զօրքն «Ալբանական»:
 Օտարազգիք տոմսակներով,
 Են մզկիթի մէջ մտնում.
 Առջևի նստարաններում,
 Պաւիլոնում տեղ բնում:
 Լուսանկարներին խիստ,
 Արգելում է ներս մտնել.
 Մզկիթի մէջ շնորհանիստ,
 Մեծ հանդէսը նկարել:
 Թէպէտ Սուլթանն ինքն,

Սիրում է միշտ նկարուել.
 Բայց նորա այդ նկարներն,
 Սահմանից դուրս չեն եկել:

ԵՂՂԸ ՔԵՕՁԻ ՏԵՍԸ 1).

Ելլող-քեօջքն ինքն ինքեան,
 Գեղեցիկ է, գուրեկան.
 Պալատն կայսրի փառահեղ,
 Պարունակում է այնտեղ:
 Նորա զարդն է թանկազին.
 Եւ չունի զին, է անզին:
 Փղոսկրներից աաշուած,
 Նրանց գուներն են շինուած:
 Գանուում է այնտեղ անցք մի,
 Որն բոլորից է գաղտնի.
 Յայանի է նա Սուլթանին,
 Ու հաւատարիմ ծառին:
 Որի մէջ իրաւունք չունի,
 Մանել ոչ ոք Կայսրից բացի.
 Գանուում է այնտեղ մշտեկան,
 Դրամարկդն արքայական:
 Նրա մէջ են արժէթղթեր,
 Ու զանազան գոկումենտներ,
 Տեսակ, տեսակ, գաղտնի թերթեր,
 Եւ այլ ուրիշ տոմսակներ:
 Պալատն մի կողմից միանում է
 Թատարոնի շինութեան հետ

1) Քաղուածք «Նոր-Դար» թերթից 1903 թիւ:

Իսկ միւս կողմից նա կպած է
 «Կասկանդիսեան» քեօշքի հետ.
 Ըմբռնում է գէմն քեօշքի,
 Լիճ «Նրաբար» լի ձկներով.
 Մեծ Սուլթանն վերայ որի,
 Զբօսնում է մակոյկով:
 Երկարածև նախասենեակ մի,
 Որն գալերէի տեղն ունի,
 Բնակարանից է ուղին,
 Տանում պալատ «Մերասիմին»:
 Պալատն այս վերայ կանգնեց,
 Երբ որ Կոստանտինապօլիս,
 Գերմանիայի Վիլհէլմ կայսրը,
 Իւր մարզկանցով այցելեց:
 Շինուեցաւ երեք յարկանիկ.
 Հազար հինգ հարիւրի մօտիկ
 Մետր քառակուսի Ռուսի
 Տարածութիւնը կրմբռնի:
 Մերասիմը երբ կառուցուեց,
 Նորա վերայ ծախք զրուեց,
 Զարդարանքով ամեն հաշուած,
 Ֆրանկ միլիօն մէկ ու կէս:
 Ելզըզ-քեօշքն հիմքներով,
 Առևարական աներով,
 Եւ հարուստ գործարաններով,
 Տոյցում է մի քաղաք բով:
 «Թիամիրխանի» հիմնութիւնը,
 Պարունակում է միջումը,
 Սղոցաշէնի գործարան,
 Եւ այլ բանի ձուլարան:
 Գտնւում է այնտեղ նաև զինարան.

Որն ծառայում է որպէս թանգարան,
 Պահւում են այնտեղ Եւրոպական,
 Եւ զէնքերն հին Ասիական:
 Անթիւ հրացանք Մաուզէրի,
 Ստրճանակը Վինչեստրի.
 Թնդանօթներն Կրուպալի,
 Ու հրազէններն Մաքսիմի:
 Այնտեղ է թանգարանն իսկական.
 Որի մասն ցոյց է տալիս զբառան,
 Գտնւում է նաև այնտեղ,
 Աստղապաշտկան գիտարան:
 Սուլթանն ունի չորս գոմ.
 Որից մէկն է պարտիզում,
 Կայսրի նժոյգ ձիաները,
 Այս գոմի մէջ են պահւում:
 Մնացեալ երեք գոմերում,
 Պահւում են որպէս նուէր,
 Մաքուր գեղեցիկ զարդում,
 Հարիւրի մօտ չափ ձիեր:
 Քիչ հեռու լճից ընթերցում,
 Հինգերորդ գոմն է շինուած.
 Պահուած այնտեղ գեղեցիկ ձին.
 Ռուսաց Յարն է պուել Կայսրին:
 Լայնատարած մի շէնք այնտեղ,
 Գոմի յետեն է գտնւում.
 Արքայագունները որտեղ,
 Զիավարժութիւն են սովորում:
 Սիրում էր զբօսնել տարածամ,
 Սուլթանն երբեմն էլ ինքն.
 Զբօսանքին վերջ տուեց այն ժամ,
 Երբ հեռեալ եղաւ զէպքն:

Մի անգամ գնաց զբօսնելու
 Գործարանը «յաղճապարու»,
 Ըստ սովորին բանւորներին,
 Ճանապարհից հեռացրին:

Նորանցից մէկն թագնուեց. —
 Ծառաներից չը նկատուեց,
 Երբ արքան գործարան մտաւ,
 Բանւորն նորա դէմ ելաւ:

Իսկոյն նորա նժոյգ ձին,
 Անձանօթին տեսնելով,
 Նրանից և ետ խրանելով,
 Քիչ մնաց գցի իւր տէրին:

Ելբլբ քեօշքում միջի այլոց,
 Գտնուում է գազանանոց.
 Շինուած են ջոկ բաժանմունքներ,
 Որտեղ կան շատ գազաններ:

Շատ է սիրում մեծ Սուլթանը,
 Կռիւն ուժեղ խոյերի,
 Ինչպէս էր «Աբդուլ-Ազիզը», 1)
 Սիրում կռիւ աքաղաղների:

Նա շքեղ թռչնանոց ունի.
 Որտեղ թռչուններն են լիքն,
 Մէջն շքեղ թռչունների,
 Մի օր պատահեց այս գէպքն:

Մի թուլթակ առաջ Սուլթանի,
 «Չափար աղա» գոռաց յանկարծ.
 Թուլթակի ձայնն արքայի
 Չայնի նման էր անկատկած:

Սուլթանի սենեակը մտաւ.

1) Տաճկաց սուլթանն էր, որն 1876 թիւ մայիսի 30-ին գահընկեց եղաւ:

Այդ երբ ծառան լսեց,
 Արքան սորա վրայ զայրացու,
 Ու թուլթակին սպանեց:

II.

Սուլթանն ունի ծաղկանոցներ.
 Որտեղ բուսնում են ծաղիկներ,
 Այնտեղ նաև աճում են շատ,
 Տեսակաւոր ծառք պաղաքեր:
 Վիլհելմ կայսրն Գերմանիայի,
 Երբ լինում էր մէջն Պօլսի.
 Սուլթանն իր ձեռքով կապեց,
 Վիլհամիային 1) փունջ նուիրեց:

Ծաղկանոցից գեղեցիկն էր,
 «Փոքր արիանոնան» ապահով,
 Երկաթով շրջապատուած էր,
 Լիւտովիկոսի հաստ որջով:

Սուլթանն իւր բնակարանում,
 Անց է կացրել տելեֆոն.
 Միկնոյն նաև պալատում:
 Էլէքտրական լուսութիւն:

Ընթերցուած այդ լուսութիւնից,
 Սուլթան շատ է վախէնում.
 Որովհետև այդպէս լոյսից,
 Կարող է ծագել պայթում:

Չնայած նորա պալատում,
 Էլէքտրական լուսութեանը,
 Շատ այլ տեղեր ելբլբ-քեօշքում,
 Թոյլ չի տրուում այդ իսկ բանը:
 Գրանից յետոյ պալատին ընդդէմ,
 Կառուցուած է ահազին բեմ,

1) Վիլհելմ կայսրի թագուհին է:

Որի մէջ կը գտնուի,
 Գրասենեակքն քարտուղարի:
 Պաշտօնարարքն Տաճկական,
 Ժամանակն մի քննութեան,
 Փոխանակ արդար դատութեան,
 Ենթարկում են անգթութեան:
 Յանցաւորի թեւերի տակ,
 Տաքցրած ձու են դնում.²
 Եւ կաթսաներով տաք տաք,
 Նրանց գլխովն են ծածկում:
 Կարծելով գործողը յանց.
 Կըլինի իսկոյն ուշգնաց,
 Ու այդպիսով երեւան,
 Հանում են արդար լայն:
 Նոյն և այսպիսի պատժի,
 Ենթարկուեց «Մուզաֆեր աղան»¹⁾.
 Գաղտը որն պալատի,
 Յայտնեց ջոկ դեսպանատան:
 Յիշուած պատերն քեօջքի,
 Փոքր քաղքի կը նմանի.
 Որտեղ բնակչաց թիւն.
 Մօտ է տան հազարի:
 Բնակիչներէր ութ հազար,
 Թիկնապահն է Սուլթանի.
 Իսկ մնացեալ քիչ համարքը,
 Ծառայողներն են Կայսրի:
 Որոնք են հետեւեալքն.
 Սենեկապետներ, երաժիշտներ,
 Այգեպաններ, խոհարարներ,
 Մատակարարք և այլքն:

1) Մատակարար էր որ արտօրուած էր Մեկկա:

Ծառայողաց վրայ Սուլթանի,
 Մեծ գումարներ կծախսուի,
 Ամսուայ ոտճիկն արժի
 Երեք հարիւր հազար ուրբլի:
 Խոհանոցից նորա իւր,
 Գուրս է գալիս ամեն օր,
 Մօտիկ հազար եօթ հարիւր,
 Մատուցարան կերակուր:
 Արժէթղթերն են նրա հասնում:
 Մօտիկ վեց միլիօն ըուբլի.
 Կալուածքից է տոկոս ստացում,
 Եռսուն հարիւր հազար ըուբլի:
 Գումարն գրամագլխի,
 Ոչ մի մարդու յայտնի չէ.
 Բայց կը ենթադրուի,
 Մօտիկ եռսուն միլիօնի:
 Ամեն մի մարդ գարմանում է,
 Որ այդպէս մեծ ահագին.
 Գումարն բաւական չէ,
 Պալատի ծառաներին:
 Ստիպուած են լինում ուստի,
 Ծառաներն զանգապուելով,
 Սպասել Կայսրից ոտճիկի,
 Օրերով ու ամիսներով:
 «Սաքս Բէյի»¹⁾ ձեռքով շինուեց,
 Երբ «Ջրագանի» պալատ նրա.
 Պահանջում էր ելլող-քեօջքից,
 Եօթանասուն հազար լիրա:
 Վճարել փողն շուտով,
 Վարչութիւնը խոստացաւ.

1) Ֆրանսիայի յայտնի ճարտարապետ:

Բայց երկար սպասելով

Փողն չը վճարուեցաւ:

Սաքս-Բէյն յոյսհատուած,

Պարիզ քաղաքն գնաց.

Անցեալ տարի նրան քաղցած,

Պարիզում գտան մեռած:



Այս է ներկայացնում,

Ֆեօշքի գեղեցկութիւնն.

Որն որ պարզ է գրուած,

Սակայն շատ է կրճատուած:



Յ Ա Ն Կ.

	Երես
Յառաջարան	3
1. Պատերազմի առիթով	5
2. Անգուլթ հրաման	26
3. Իմ դարձը	31
4. Վիրաւոր թռչնակ	33
5. Էջմիածին	34
6. Գիշատու արծիւ	35
7. Անբաղզ մըջիւն	36
8. Գայլն ու այծեամբ	39
9. Հայ մանուկներ	41
10. Աղբատ ձկացող	42
11. Պատուի մայրիկ	43
12. Խմէք հայրենեաց կենացը	45
13. Հայրիկն Թիֆլիսում	46
14. Ողբ	48
15. Օգնիր ակզիկ	49
16. Նոր տարի	50
17. Հայրինիքից բաժանուելը	52
18. Հին Նախիջևան	52
19. Կալանաւորի աղերսանքը	55
20. Հայ գրագէտ	56
21. Հանելուկ	57
22. Երազ	59
23. Սէր	60
24. Երիտասարդն ու օրիորդն	61
25. Սրտիս ծրագիրն	64
26. Բագուի աղէտը	66
27. Սուլթանի կեանքը	70
28. Սուլթանի փառքը	80
29. Ելզըզ-բեօշքի տեսքն	87

1818

Handwritten title or header

- 1. ...
- 2. ...
- 3. ...
- 4. ...
- 5. ...
- 6. ...
- 7. ...
- 8. ...
- 9. ...
- 10. ...
- 11. ...
- 12. ...
- 13. ...
- 14. ...
- 15. ...
- 16. ...
- 17. ...
- 18. ...
- 19. ...
- 20. ...
- 21. ...
- 22. ...
- 23. ...
- 24. ...
- 25. ...
- 26. ...
- 27. ...
- 28. ...
- 29. ...
- 30. ...

111

11

ՀՀ Ազգային գրադարան



NL0336461

43943

89199

U-72